




ԹԻԻ 5

ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԳՐԱԳԵՏ

ՄԻԲԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

13 Փետրուար 1899

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

ՄԵՐ ԳԱԻԱՌԱՅԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ ամէն անոնք, որոնք իրենց հաւանութիւնը չեն յայտնած դեռ «Մասիս»ի բաժանորդագրուելու, կ'ազդարարենք թէ Ե. Թիւր վերջինն է որ կը զրկենք իրենց: Ուստի պէտք է փութան, Զ. Թիւին հրատարակուելէն առաջ, բաժանորդագինը զրկել մեզ, եթէ չեն ուզել որ ընդհատուի թերթերու առաքումը:

* *

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՆԻ փոխարէն գաւառներէն փոսթի փուլ զրկողները պէտք է վեցամսեայ ԲԱՅՆԵԼԵԹԻՆ հատ, և տարեկան ՅԻՍՈՒՆ ԵՒ ԶՈՐԱ հատ զրուհոց փուլ ներխոսկեն: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ նամակի մը մէջ:

* * *

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ դեռ չվճարող ընթերցողներուն ալ կը կրկնենք թէ «Մասիս» Ե. Թիւր վերջինն է որ կը զրկուի, ուստի պէտք է անյապաղ բաժանորդագինը հասցնեն մեզ:

* * *

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԻՆ կը խնդրուի անյապաղ հասցնել մեզ, գանձուած ստացագրերու փոխարէքը, նկատողութեան առնելով սա կէտը թէ թերթի մը հրատարակութեան բոլոր ծախքերը կանխիկ են:

ՄԱՍԻՍ, ԿՐԱՍՄԱՅԱՅ ՀԱՆԴԵՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՍՑՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	44 դր.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	22 "
Եռամսեայ	6 " (192 էջ)	11 "

ԳԱԻԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	54 դր.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	27 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	12 ֆրանք
Վեցամսեայ	12 " (384 էջ)	6 "

* ՄԱՍԻՍ, ՁԵՌԻՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂԻՇ.

«Մասիս»-ի վերաբերեալ ամեն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել թերթի անօրէն-խմբագրին

ՄԵԴԱՅԷԼ ԵԱՍՏԱՆԷՅԱՆ

Սթամպոլ, Գապը Ալի ճատոտէսի, քիւ 20
Stamboul, Avenue de la S. Porte No 20

ՄԱՍԻՍ

ԿԻՍԱՄԱՆԱՅ • ԳԱՆԴԵՍ

48^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 5

ՆՈՐ ՇՐՋԱՆ

13 ՓԵՏՐՈՒՄ 1899

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ


Աւելորդ է շեշտել թէ առողջ ընթերցանութիւնը ի՞նչ մեծ բարիք մըն է մանաւանդ անոնց համար որոնք ժողովուրդի մը մեծամասնութիւնը կը կազմեն, եւ որոնք ամէնէն աւելի պէտք ունին սովորելու, զարգանալու:

Մեր մէջ ընթերցանութիւնը դեռ չէ տարածուած, ու բոլոր ազնիւ դաղափարները և լայն մտածումները, որոնք մարդս կը զարգացնեն, դժուար է տրւապագութեան միջոցաւ մեր հասարակութեան տգէտ և աղքատ պատկառելին մէջ մտցնելու: Մանաւանդ գաւառներու մէջ, ուր այնքան աղքատ դպրոցներ և որբանոցներ կան, զուրկ զարգանալու բոլոր միջոցներէ, ամէնէն աւելի կարօտ են մեր բարոյական ու նիւթական օգնութիւններուն: «Մասիս» իր անցեալ թուովը կը շեշտէր արդէն այն պէտքը, որով ԳԳ և ԴԴ իրարու հետ պէտք է միանան, որով միայն կարելի է ակընկալել բարոյական և նիւթական աւելի բարգաւաճ վիճակ մը:

«Մասիս»ի խմբագրութեան կողմէ եղած դիմումներու վրայ, յայտնուած է որ այսօր թէ գաւառները և թէ Պոլսոյ մէջ, նիւթական ամէնաթշուառ վիճակի մասնուած հարկերէ մօտ դպրոցներ, որբանոցներ կան, որոնք ամէն կերպով զըրկուած են հայ մամուլի արտադրութեան մասնակից ըլլալէ: Այդ բոլոր թշուառ, աղքատ դպրոցներու և որբանոցներու ցուցակը՝ տեղի անձկութեան պատճառաւ յաջորդ թիւով պիտի հրատարակենք:

«Մասիս»ի խմբագրութիւնը առ այժմ պատրաստ է ԳԳ օրէնքի ձեռնարկէ ալ աղքատ դպրոցներուն և որբանոցներուն, սպասելով որ մեր հարուստներն ալ, իր օրինակին հետեւելով, փութան հրատարակուելիք ցուցակի բոլոր անուններուն թերթ զրկուելու համար հարկ եղած բաժնեգինները վճարելու յանձնառու ըլլալ: Մեր հարուստներուն համար ահաւասիկ առիթ մը որով իրենց համար դրամական շատ պզտիկ զոհողութիւններով, կարող պիտի ըլլան բարոյական մեծ բարերարութիւն մը ընել:

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԸ

Մ Ի Բ Ա Յ Ե Լ, Շ Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն



ԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
զարգացման աստիճանը
կրնանք միշտ գատել զի-
րենք զբաղեցնող խըն-
դիրներու տեսակէն ու

այդ խնդիրներու շուրջ յարուցուած
գործունէութեան կերպերէն : Որոշ
ճաշակով մը և որոշ ըմբռնումով
ամէն Հասարակութիւն կը կառչի այն
տեսակ խնդիրներու, որոնք կամաց կա-
մաց իր աւանդական ցաւերը կը դառ-
նան, եթէ ինքը չունի կենսականու-
թիւն մը այդ բոլոր խնդիրները հար-
թելու համար : Հասարակութիւններու
զարգացման չափը կը ճանչցուի միշտ
իրենց այդ աւանդական ցաւերու տե-
սակովը : Հասարակութիւններ կան ո-
րոնք նուրբին ճաշակը ունին, և զիրենք
զբաղեցնող ընկերական խնդիրներն ալ
դարակերջիկ գրգռութիւններ են, ու
ցաւերն ալ որոնցմէ կը տուայտի ան,
արդիւնքն են յափրացած կեանքի խօշ
պահանջներուն : Այսօր ֆռանսան է որ
մեզ կը ներկայացնէ նոյն օրինակ հա-
սարակութիւն մը : Նորէն, հասարա-
կութիւններ կան որոնք ամէնէն աւելի
անհատական ու ընտանիքի confortէն

կ'ախորժին, ու իրենց մէջ յարուցուած
բոլոր խնդիրները որոշ կերպով կը ձգ-
տին անհատական և ընտանիքի հան-
դըստութիւն մը ձեռք անցընելու : Անդ-
լիական ժողովրդին հաւաքական բու-
 վանդակ գործունէութիւնը, ինչպէս
նաեւ երկրին ալ քաղաքականութիւնը
պատկերն է հասարակութեան շեշտուած
կերպով անհատական բարգաւաճման
ու դոհացումներու տիրանալու ջան-
քերուն :

Հասարակութիւններ կան, ինչպէս
Գերմանիան, որոնք իրենց բովանդակ
գործունէութիւնը կ'ենթարկեն գիտա-
կան, բնագիտական մեկնութիւններու,
և որոնց մէջ յարուցուած ընկերական
խնդիրներն ալ կիրարկումն են ազդեցիկ
գիտական մտքերու այն տեսութիւննե-
րուն՝ որոնք յստակ կերպով կարողաց-
ւին ապագան որ պիտի կազմուի հաշ-
ուուած գործունէութեան մը տեղի ու-
նենալէն վերջը :

Հասարակութիւններ ալ կան, ամէ-
նէն թարմերը ու ամէնէն կենսունակ-
ները թերեւս, ինչպէս Մ : Նահանգներն
են, որոնք յանդուգն սկզբնաւորու-
թեամբ մը ամէնուն քալած ճամբէն
տարբեր ճամբու մը մէջ մտած, ունին
այն տեսակ ընկերական խնդիրներ՝ որոնք

վաղահաս են աւանդութիւններով ծանրաբեռնուած հին աշխարհին համար, և որոնք թերեւս անոր վաղուան խնդիրները ըլլան :

Մեր հասարակութիւնն ալ ունի իր վերջին կէս դարու խնդիրները, որոնց շուրջը քիչ ազմուկներ չեն յարուցուած և որոնք մինչեւ այսօր կրնան մեզ դեռ միեւնոյն ոգեւորութեամբ ու թարմութեամբ զբաղեցնել, եթէ չի վախճանք «տիրացու ազգ» մը կոչուելէ :

Տէր պապայի, թապախի, թաղական խորհուրդի, վարժապետի, աստղնորդի, ապօրինի պատկի ու այսօր ալ կրօնափոխութեանց և նման խնդիրներու ամբողջ երամ մը, մեր խեղճուկ հրապարակի հրատապ հարցերէն են դեռ : Ընդհանուր բարոյական, բնտանիքի, նիւթական բարգաւաճման, տնտեսական կեանքի խնդիրներու մասին գիտակից գործունէութիւն մը ցոյց չի տար մեր հասարակութիւնը . ու իր միտքն ալ կաշկանդուած է բոլորովին սահմանափակումին մէջ այն ափ մը խնդիրներուն, որոնք մեր հասարակութեան մտքի ու սրտի սնանկ վիճակը կը շէտեն :

Վերը յիշուած քանի մը խնդիրները գրեթէ ամբողջութիւնն են, որոնցմով մեր մամուլն ալ կը զբաղի և որոնք միշտ վիճակուած են թարմ մնալու, որովհետեւ գոնէ այդ խնդիրներուն մէջ չենք գիտցած ոչ մեր պաշտօնատուններուն և ոչ ալ մեր ընդհանուր գործունէութեան եղանակովը վերջ մը տալ անոնց, որոնք լուրջ մտքերու, գիտակից անձերու համար կամաց կամաց կը դադրին միջավայրի խնդիրներ ըլլալէ, և կը դառնան խղճմտանքներու տուայտիչ միջաւանք :

Ամէն ուրեք, ինչպէս նաեւ մեր երկրին մէջ մամուլը կոչուած է ժողովուրդի նիւթական ու բարոյական դարգացումի գործին սատարել ու նոր ծրագիրներ ու ճամբաներ բանալ հասարակութիւններու երջանկութեան համար :

Հայ մամուլն ալ, մասը երկրի բովանդակի մամուլին, նոյն օրինակ գործունէութիւն մը կատարելու համար պէտք է լրջօրէն ուսումնասիրէ բոլոր մեր հասարակութիւնը զբաղեցնող խնդիրները, և աշխատի խելացի անաշարկներ ընել մեր պատրիարքարանին, որ կոչուած է այդ յաւիտենական խնդիրներու կարգադրութեան գործը ձեռք առնել ու վերջ մը տալ անոնց, ուրկէ յետոյ մտքերը աւելի հանգիստ, կարող վիճակի մը մէջ պիտի ըլլան բարոյական ու տնտեսական նոր խնդիրներով զբաղելու . ու մեր թերթերն աւելի տեղ ու ժամանակ պիտի ունենան ժողովուրդի ճշմարիտ զարգացման գործին մէջ կարեւոր մասնակցութիւն մը ունենալու :

Հակառակ այս ամէնուն, մեր մամուլին՝ հասարակութիւնը միշտ ըզբաղեցնող բոլոր խնդիրներու մասին մինչեւ այսօր գրածները՝ շատ հազուադիւրս բացառութեամբ՝ ոչ թէ միայն գործնական օգուտ մը չեն տուած, այլ նաեւ ուշադրութեան խօս չեն առնուած բոլոր այն մարմիններէն որոնց ուղղուած են այդ գրութիւնները :

Բոլոր մենէ աւելի զարգացած հասարակութիւններու մէջ, վարչական մարմինները անուշադիր չեն անցնիր մամուլի յարուցած խնդիրներուն և անոր ըրած առաջարկներուն վրայէն :

Մեր պատրիարքարանը, իր բոլոր ժողովներովը կրնար տարբեր արամադրութիւն մը ցոյց տալ ու տարբեր կերպով օգտուիլ մեր արդէն ափ մը մամուլին մէջ երեւցած գիտողութիւններէն :

Պատրիարքարանը ոչ թէ միայն հակառակելու չէ մեր օրուան գործերուն նկատմամբ տեղական մամուլին մէջ երեւցած գիտողութիւններուն, այլ սկզբունքով ընդունելով թէ մեր ազգային բոլոր թերթերը պատրիարքա-

լրանի չուրջ յարմարեցնած խնդիրներով պէտք է զբաղին, ինքն ալ իր կողմէն պէտք է հաստատուէ պաշտօն մը, որուն ներկայացուցիչը, մամուլի մէջ երեւցած՝ հասարակութեան պատկանող խնդիրներու նկատմամբ եղած կարեւոր դրութիւններու և առաջարկներու կանոնաւոր մէկ քաղուածքը ներկայացնէ Պատրիարքարանի վարչութեան:

Պատրիարքարանի շրջանակներուն մէջ սկզբունքով պէտք է ընդունուի թէ փոխանակ ազգային թերթերու գրածներէն դժգոհ ըլլալու, պէտք է հաշտ աչքով նայիլ անոնցմէ դոնէ անշահախնդիրներու ներկայացուցած դիտողութեանց և առաջարկներուն և ջանալ օգտուիլ անոնցմէ:

Արդէն ժամանակին դոյութիւն ունեցած է դիւան մը Պատրիարքարանին մէջ, որուն պաշտօնը եղած է թերթերէ կարեւոր քաղուածքներ ընելով զայնս ներկայացնել իրենց յատուկ ժողովներուն, որպէս զի ասով անուշադիր չանցնին դանազան կրօնական և հասարակային զեղծումներ, մեր Պատրիարքարանի վարչութիւններէն:

Այսօր, Պատրիարքարանի մէջ միայն կամբք պէտք է ունենալ վերահաստատելու համար այդ կարեւոր պաշտօնը:


Թէ մամուլի ներկայացուցիչները և թէ Պատրիարքարանի վարչութիւնը երբէք պէտք չէ հետեւին այս երկու մարմիններու միջեւ ցրտացում մը յառաջ բերելու: Երբ մամուլի ներկայացուցիչները Պատրիարքարանի խնդիրներով կը զբաղին պէտք է անկողմնակալութիւնն ու լրջութիւնը իրենց առաջնորդ ունենան, և Պատրիարքարանի վարչութիւնն ալ պէտք է բարի տրամադրութեամբ վարուի հանդէպ թերթերու մէջ երեւցած գրութիւններուն, որոնք հասարակութեան խնդիրներով կը զբաղին և որոնց մէջ յաճախ կարող են օգտակար առաջարկներ գտնուիլ:

Երբ մամուլի և Պատրիարքարանի վարչութիւնը սկսին ձեռք տալ իրարու, և աշխատին բանաւոր կարող ազդութեամբ մը հրապարակին վրայէն սրբել տիրացուական այն բոլոր խնդիրները որոնք պայմանադրական ցաւերը դարցած են մեր միջավայրին, այն ժամանակ մեր հասարակութիւնն ալ ծանր բեռէ մը պիտի ազատի ու աւելի մտամիտօր կերպով կարող պիտի ըլլայ հետեւելու ընդհանուր զարգացման շարժումին:

Նիւթական ու բարոյական զարգացումին մէջ շատ դանդաղ հասարակութիւն մըն ենք մենք. տնտեսական ու բարոյական այնչափ կենսական խնդիրներ կան որոնց դոյութեան իսկ չենք գիտակցած ցարդ և որոնք եթէ մենէ ուշադրութեան առնուէին, կարող պիտի ըլլային, մեզ զարգացման աւելի բարձր աստիճանի մը վրայ առաջնորդել:

Մեր Պատրիարքարանը ու մեր մամուլը ազդու կերպով պէտք է ձեռք առնեն վարժապետի ու տիրացուի խընդիրները, անոնց փոքրահաս, ճիշդ կարգադրութիւն մը տալու համար, որպէս զի անկից յետոյ երկուստեք սկսուի մեր հասարակութեան բարոյականը բարձրացնող ու տնտեսական կեանքը բարդաւաճող դործունէութեան մը:

Մանաւանդ մեր մամուլը կամաց կամաց պէտք է փորձերը ընէ մեր միջավայրի տնտեսական ու բարոյական պայմաններու ուսումնասիրութիւնը ընելու, ատով իր ընթերցողներուն տնտեսականութեան ու բարոյականութեան մասին լայն ըմբռնում մը տալու համար: Տիրացուի և վարժապետի խնդիրներով միայն բաւականացող օրագրութիւն մը, մեր հասարակութեան անկումին ու աղքատացման կրնայ նպաստել, մինչդեռ օրագրական գիտակից դործունէութիւն մը, տնտեսական ու բարոյական առողջ սկզբունքներ տարածելու համար, անհամեմատ կերպով կը նպաստէ ժողովուրդի նիւթապէս ու բարոյապէս զարգանալուն:



ԿՐԹՈՒԹԵԱՆ Ի ՏԵԱԼՆԵՐ

« Մասիս » իր ներկայ թիւէն սկսելով իր ընթերցողներուն պիտի ներկայացնէ զանազան ազգերու մէջ կրթական շարժումը պատկերացնող յօդուածներ , որոնք թերեւս բարերար ազդեցութիւն մը ունենան մեր կրթական գործին վրայ , ու նաեւ համոզեն թերեւս մեր ռաւանական խորհուրդը եւ ուրիշներ ալ թէ մեր նոր սերունդի կրթութիւնը կը կարօտի արմատական բարեփոխութիւններու , որոնցմով միայն կարելի պիտի ըլլայ մենեւ աւելի կարող ու բարգաւաճ ապագայ սերունդ մը յառաջ բերել :

Մեր այս անգամուսան ներկայացուցածը Բարիգի Սոռ.պոնի ուսուցչապետներէն միոյն՝ Ժիւլ Լըմէդրի խօսածն է : Ժիւլ Լըմէդր արդէն ծանօթ է մեր գրական հրապարակին իր ժամանակակից գրականութեան վրայ ունեցած քննադատականներով :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐԻՈՔՈՒՄ

ԺԻՒԼ ԼԵՄԵԴՐ



ՅՆ տեսակ տխուր իրողութիւններ կան զորս ամէն ոք կը ճանչնայ : Ներկայ ժամանակին մէջ , ֆռանսացիքս ուրիշ շատ մը ազգերէ ետ մնացած ենք մեր արտադրող գործունէութեամբը : Ֆրանսա այլեւս ոչ ճարտարարուեստական ոչ ալ առեւտրական առաջնակարգ պետութիւն մըն է : Մեր դաղթականութիւնները կարող չեն մեզ փրկել եթէ մենք չը գիտնանք զիրենք շահագործել : Ամէն մարդ համոզուած է թէ ամէնէն լուրջ բարւոքումներու պէտք ունինք , ու ամէն մարդ գիտէ նաեւ թէ այն բարւոքումը որ իր մէջ կը բովանդակէ միւս բարւոքումները եւ ամէն բարւոքումներու գլխաւոր պայմանն է , անհատներու բարւոքումն է այն : Բայց այլեւս ժամանակը անցած է , Ֆրանսայի մէջ զրտնուած բոլոր չափահաս անհատներու բարւոքումը կատարելու համար : Ուրեմն պէտք է ամէնէն աւելի ծնող , նոր սերունդին վրայ

ազդել : Պէտք է մեր աղաքը այնպէս մը կրթենք որպէս զի անոնք մենեւ աւելի առողջ , աւելի ուժով ըլլան :

Նաեւ ահաւոր անպատեհութիւններ կան միջին դասակարգի աղոց մեծամասնութեան տրուած կրթութեան եւ ապագային անոնց՝ կեանքի մէջ ունենալիք պէտքերուն միջեւ : Փափաքս է որ նախ խօսէի մեր դասական կրթութեան եղանակին դէմ , ու յետոյ ի նպաստ նոր կրթութեան սիւթէմին , ու փորձել նաեւ ներկայացնելու համար անոր ծրագիրը :

I

Հակառակ այն բոլոր վարանոտ եւ հակասական բարւոքումներուն որոնք քսան եւ հինգ տարիներէ ի վեր կը ներմուծուին մեր կրթական ծրագիրներուն մէջ , հակառակ պէտք եղածէն աւելի խճողումին ու արտաքին չպարներուն , երկրորդական դասական կըրթութիւնը իր ներքինին մէջ կը մնայ նոյնը , ինչ որ էր այն նախկին վարչութեան օրով :

Ի՞նչ ըսելու է այս բանին . ամէն ինչ փոխուած է : Բնագիտական գիւտերը եւ հնարքները խորապէս այլակերպած են մասնոււորներու եւ ժողովուրդներու կեանքին պայմանները , եւ նոյն իսկ երկրիս մակերեսային :

Ճարտարարուեստի եւ առեւտուրի վերջնական գերազանցութիւնը հռչակուած է . Ֆրանսացիքս հասարակապետական ու ճարտարարուեստական ընկերութիւն մըն ենք այսօր , աւելի զօրաւոր ազգերու մրցումին հանդէպ ընկճելու սպառնալիքին տակ կամ արդէն կիսով ընկճած , եւ մեր միջին դասակարգի տղաքը ու մեծամասնութիւնը նաեւ ժողովուրդի զաւակներուն , ութը տարիներ կը յաակադնեն ունեւելու համար — շատ գէշ կերպով — ճիշդ ինչպէս որ Յիսուսեան հայրերն ալ ժամանակին կը սովորեցնէին — շատ լաւ կերպով — միապետական ընկերութեան մը եւ այն տեսակ Ֆրանսայի մը մէջ , որուն գերազանցութիւնը ճանչցուած էր Եւրոպայէն , եւ այն տեսակ առեն մը ուր լատիններէնը միջազգային , ազնուապետութեան , առեւտրական (magistrature) եւ առանձնաշնորհուած դասակարգերու լեզուն էր .

Միթէ այս , ժամանակէ զուրս ապրիլ մը (anachronisme) չէ , ու մեր կրթութեան ներկայ օգտակարութիւնն ալ անհեթեթ նախապաշարուն մը :

Բայց պիտի կասկածէի այս « կանխորոշ » փաստի ստուգութեան եթէ ես անձնական փորձառութեամբս այդ բանը հաստատուած չի գտնէի :

Արդէն գիտենք ինչ որ հին ուսուցման եղանակի կուսակիցները կ'ըսեն . (1) « Մենք մտաւոր յաջորդներն ենք յոյներուն եւ լատիններուն : Անոնց լեզուն սովորիլ , կը նշանակէ սովորիլ ծագումը մեր լեզուին եւ հետեւաբար զայն լաւագոյն կերպով սովորիլ . Ասիկա կը նշանակէ փառաւոր անցեալի մը հետ հաղորդակցիլ , աւանդութիւններու ամէնէն նշանաւորին վերայաբրիլ , տարածել մեր կեանքը , Այս ուսումները մեզի համար լաւագոյն կարգապահութիւնն են : Այն վաղեմի գիրքերը , դանձերն են ընդհանուր գաղափարներու եւ վեհանձն մտածումներու : Առանց պատճառի չէ եթէ նախնի ժամանակներու մէջ յունարէնի եւ լատիններէնի ուսումները կը կոչուէին նոսեւ

մարդկայնութիւններ (humanité) : Անոնց մէջէն կը ստանայինք գեղեցկին սէրը , կարգ ու կանոնի եւ աւելիի ճաշակն ու զգացումը : Այս լեզուները եւ այս դրականութիւնները ընտիր դաստիարակներ են , եւ այլն » :

Իսկ հիմա յունարէնէն բառ մը չեմ դիտեր , եւ տարւոյն մէջ երեք անգամ չի պատահիր որ լատիններէն կարգամ — ամբար կարճ է կեանքը : Բայց , այս լեզուները որոնց կարեւորութիւն չեմ տար այլ եւս , արդեօք ձգած են մէջս ազնիւ յուզումներու եւ գաղափարներու մթերք մը , որոնցմէ սակայն միշտ կ'օգտուեմ , առանց այդ բանին գիտակցելու :

Անկեղծութեամբ ըսելու համար , չեմ կարծեր :

Ամէն անգամ որ հին գործի մը մասին կը մտածեմ , ստիպուած եմ խոստովանիլ , որ զայն մէկ անգամէն չեմ ըմբռներ : Հինաւորաց գործ մը , կ'երեւայ ինձ միայն ճոխացած մեկնութիւններու՝ զորս ֆրանսացի դասականները տուած են անոր , ու ամէնէն վերջն ալ ժամանակակից քննադատներու բացատրութիւններուն ընդ մէջէն . եւ անոր գեղեցկութիւնն ալ զգալի չէ ինձ համար բայց եթէ այն տեսակ գործերու միջոցաւ որոնք աւելի մօտ են ինձ :

Ու յետոյ ի՞նչ է վերջապէս ընդհանուր գաղափարներու , դաստիարակութեան գաղափարներու այդ միշտ խօսուած գանձը որ միայն յունական եւ լատինական դրականութիւններու մենաշնորհը տէքը ըլլայ :

Խօսքերնիս յունարէնի մասին չէ , զոր նոյն իսկ բարձրագոյն ուսումներու հետեւողներն ալ չեն գիտեր , քանի մը յունարէնի մասնագէտներէ զատ : Այն միակ , անփոխարինելի , կարծեցեալ գանձը քանի մը էջեր են Լուկրէտիոսէն որուն զլիսաւոր արժէքն է տարտամ կերպով տարվիճական ըլլալ , քանի մը տեսարաններ են Պղատոսէն եւ Տէրէնտիանոսէն , գրեթէ միշտ նուազ արժէքաւոր քան թէ այն նմանութիւնները զորս Մօրէէ ըրած է անոնց հետեւելով , Վիրգիլիոսի մէջ քանի մը կտորներ են որոնք Լամարգինի կամ Միշլէի այս ինչ հատուածի արժէքը չունին , յետոյ Տիտոնի տարփանքը որ չի հաւասարիր Պէրէնիսի եւ Ռոքսանի ռափնեան տար-

(1) Մեր պոյմաններուն մէջ լատիններէնի տեղը երբ դարձաւ զենք , կրնանք ըսել թէ Ժուլ Լեմէտրի յօդուածը իր շատ մը կէտերուն մէջ կը պատշաճի մեր բարբերուն :

փանքներուն , Տակիստէն քանի մը դուլ-
ներ են ներսնի վրայ , Հորասի տողերուն
մէջ Պէռանսէի եւ Սարսէյի իմաստութիւնը կը
դանենք , իմաստասիրական բոլոր դրութիւն-
ներէն կազմուած Քուզէնեան ընտրողականու-
թիւնն է Կիկերոնին կատարածը , Սենեկայի
նամակներուն եւ դաշնագրութիւններուն
Ստոյկիկեան ձգտումն է Քուզէյլինը . ճշմար-
տութեան մէջ այս է ամէնքը եւ ոչ աւելին :

Նախ բովանդակ նախնիքը հաւաքուած
կը գտնենք Մոնթէնի մէջ , որ յետոյ 17րդ
դարու գրականութեան ամէն կողմերը
սփռուած է : Հին ժամանակի ամէնէն
կենսական ծուծը , Փոանսացի դասա-
կաններու կողմէ 16րդ դարէն ի վեր իւրա-
յուած է ու մեզի համար մարտուած : Ու-
րեմն ինչո՞ւ համար նորէն ձեռք զարնել այն
աւտակ աշխատանքի մը որ այնքան լաւ կեր-
պով կատարուած է արդէն , ու մեր հաշտոյն
վերսկսիլ , անօգուտ կերպով , այդ երկար
մարտողութիւնը :

Իրականութեան մէջ , ոչ Յոյներուն եւ
ոչ ալ Հռովմայեցիներուն կը պարտինք մեր
սրտի եւ մաքրի կազմութիւնը , բայց եթէ
ամէնէն առաջ Աւետարանին , Փոանսացի
դասական հեղինակներուն , Մոնթէնիին , Բա-
քալին , Լա Պոլսէյէնին , Վոլդէնին , Ռուսոյ-
ին , Շաթոպրիանին , Լա Մառթինին , Վին-
տրին , Միլլէրին , Սէնդ-Պէօլին , Ռենանին
եւ ուրիշ Փոանսացիներու :

Եւ որովհետեւ իմ կեանքէս 12 տարի
անցուցած եմ յունարէնի եւ լատիներէնի ու-
սուցման , հետզհետէ կը զիտակցիմ թէ բան
մը չեմ գիտեր : Չեմ գիտեր անգլիերէնը ,
զոր աշխարհի կէսը կը խօսի , գերմաներէն
ալ չեմ գիտեր զրեթէ : Թերեւս առարկէք
թէ կրնայի սովորիլ անգլիերէն եւ գերմանե-
րէն երբ դեռ երիտասարդ էի . բայց միթէ ի՞մ
յանցանքս է , եթէ զրեթէ միւս բոլոր ար-
դաքներուն պէս ունէի , սահմանափակ եւ
չափաւոր մտաւոր աշխատութեան կարողու-
թիւն մը , որ բոլորովին զրաւուած էր ուսմամբը
այն մեռեալ լեզուներուն զորս կոչտ աւան-
դութիւն մը կը հարկադրէր մեզ սովորիլ եւ
որոնցմէ այնքան քիչ օգուտներ պիտի քա-
ղենք յետոյ :

Գերմանական գեղեցկութիւնը եւ անդ-

լիական գեղեցկութիւնը , որոնց ճոխութիւնն
ու խորութիւնը կ'ընդհամարեմ , զոց են իմ
առջեւ , նոյն իսկ անկարող եմ ինձ համար
օգտակար կերպով ճամբորդել : Այն քիչն ալ
մտցած եմ զոր սովորած էի չափազիտութե-
նէն եւ բնական զիտութիւններէն , անճարակ
են անդամներս , նոյն իսկ ձեռքի արհեստ մը
չեմ գիտեր , եւ անսպաս կղզիի մը մէջ
Ռոպէնսոններու ամէնէն զժրագրը պիտի
ըլլայի : Ոչ մէկ բանի կրնամ ծառայել բայց
եթէ զրեւու , եւ ասիկայ ալ չպիտի յանդը-
նէի երգնուլ թէ լատիներէն գիտնալուս կը
պարտիմ , որովհետեւ մենէ ոչ մէկը կրնայ
յաւակնութիւնը ունենալ Լուի Վէօյեօէն ա-
ւելի յստակ զրեւ եւ Ժոսէ Սանէն ալ : Երկուքն
ալ լատիներէնի ազգա գրողներ :

Ուրեմն պէտք է որ մեռեալ լեզուները
ընդունուին իւրեւ երկրորդական նշանակու-
թիւն ունեցող մօքի մարդանքին համար :
Եւ ինչո՞ւ համար նոր լեզուներու ուսումը
նուազ արժէք պէտք է ունենայ :

Այնքան որ կրնամ դատել գերմա-
ներէն լեզուի քերականութիւնը , աւելի գե-
ղեցիկ է եւ աւելի ներդաշնակ իր բարդու-
թիւններովը քան թէ լատիներէնը , եւ յունա-
րէնէն ալ պակաս չէ : Ու յետոյ գալով հին
գրականութիւններու նիւթին , միայն Փոան-
սացի դասականներու միջոցով չէ որ զայն
կարելի է ներարկել մեր աղոց մտքերուն
մէջ , միեւնոյն գործը , թերեւս աւելին կըր-
նանք կատարել նաեւ նոր լեզուներու եւ
գրականութիւններու միջոցով :

Եթէ լատիներէնի օգուտները ես իսկ չեմ
վայելած , որ քսան տարի առաջ բաւական
գիտէի , եւ եթէ ընդհակառակը յստակ կեր-
պով կը տեսնեմ ինչ բանի որ սովորելու արգելք
եղած է այն , ինչօգուտ կրնայ ունենալ այլ եւս
լատիներէնը մեր ուսումնարանի աշակերտնե-
րու տասնէն իննին , որոնք այնպէս կը կար-
ծեն թէ լատիներէն կը սովորին , բայց չեն գի-
տեր եւ չեն ալ կարող այդ լեզուն սովորիլ :

Ուրեմն ուսումնարանի աշակերտները եր-
կու անգամ կը կորսնցնեն իրենց ժամանակը ,
նախ չի սովորելով լատիներէնը զոր եթէ սով-
րած ալ ըլլային նորէն օգուտ մը չպիտի ու-
նենար իրենց : Եւ այն ժամանակը լաւագոյն
կերպով պիտի դորձածուէր . նոյն իսկ չեմ

ըսեր նոր լեզուներ , բնական գիտութիւններ , աշխարհագրութիւն սովորելու համար — ինչ որ անվիճելի է — այլ խաղով , մարմնամարզով , ատաղձագործութեամբ եւ չեմ գիտեր ինչով , ի բաց տոեալ պարապ մնալը :

II

Ինչ որ ամէնուս ցանկութիւնը պիտի ըլլար մաղթել , ահաւասիկ .

Միջակոբեարի (bourgeoisie) ազոց ամէնամեծագոյն մասին համար , որ մշանջնաւոր կերպով իր անունը կ'առնէ ժողովուրդէն եւ հոն կը վերանորոգուի , պէտք է ուսուցման նոր եղանակ մը որ այսօրուսնին պէս օտարածին չըլլայ , այլ լայն ու անկեղծ կերպով կազմակերպուած , աւանց այլ եւս գասական ուսմանց պատճառաւ ծայրատուած ըլլալու :

Լիւններու մեծագոյն մասը որ հիմա դոյութիւն ունի , պէտք է նոր ուսուցման լիւններու փոխել : Յետոյ Բարիզի 2 կամ աւելի լիւնները ու նաեւ ուրիշ համալսարանական քաղաքներու լիւնները միայն յատկացնել յունարէնի եւ լատիներէնի ուսուցման : Պէտք չէ խտրել զնալ գասական լեզուները չը գիտցող եւ գիտցող բժշկութեան եւ իրաւագիտութեան ուսանողներու միջեւ :

Մարդկայնութիւնը (լատիներէնի եւ յունարէնի ուսումը) համաձայն եւ որ ազնուականութիւն մըն է , յայց պէտք եղածէն աւելի ազնուականութիւն մը , եւ ան ալ միայն անոնց քով որոնք արդէն մաքի ազնուականներն են : Եւ մարդ կրնայ մաքի ազնուական ըլլալ տոանց յունարէնի եւ լատիներէնի ալ : Միտի եւ կորովի տէր երիտաւարդ մը՝ յաղթակալմ , ուժեղ , վարժ մարմնամարզանքներու , առեւտրական ուսումներով աղէկ մը անած , գործնական փանօթութիւններով զինուած , արհեստի մը կամ ճարտարարուեստի մը տէր , եւ որ ամէնէն վերջ աղէկ կարգացած է , եւ իր հաճոյքին համար , քանի մը Ֆոսնաացի դատակամներ ալ , աւելի չահեկան անձնաւորութիւն մըն է , աւելի կենդանի , բարոյական աւելի մեծ արժէքով մը , եւ աւելի է գործածել բառը , աւելի նշանաւոր քան թէ երեք քառորդ ֆոսնաացի տեղոյն եւ ունայնամիտ գպրութեան պատկաւորներուն(1) :

(1) «Մասին յատուցիկայ թիւով պիտի ներկայացնենք երկրորդ մասը ողջ տառնարանութեան որով ֆոսնաացի հանրաժանութ քննադատը միջոցները ցոյց կուտայ կրթական նոր գործունէութիւն մը սկսելու համար ֆոսնաացի մէջ :

Ե Ո Ն Ե Ր

Ս Կ Ե Պ Տ Ի Կ



Մէն մարդ կը կարծէ թէ զրամը ներգործական գեր մը ունի ամէն ուրեք , Կեանքի մէջ աւելի կրաւորական է տնոր գերը , քանի որ ընդհանրապէս կ'երթայ հոն ուր կարողութիւն եւ գործառնութիւն ձեռք ձեռքի տուած են :

* * *

Եթէ սէրը , սերունդը շարունակելու համար , բնական օրենքներէ նուիրապործուած զգացումը չըլլար մարդկային սրտին մէջ , որով կին եւ այլ իրար ամբողջացնող կէսեր կ'երեւան մեզ այսօր , մարդուն համար խեղալ զգացումը պիտի ըլլար զէպ ի իրար տակուրութիւնը , անհատական կեանքի մը կոտ ին համար :

* * *

Այրերը իրարու մէջ ազնուութեամբ , վեհանձնութեամբ կրնան բարեկամանալ , իսկ կիներուն հետ միայն սիրով կարող են բարեկամութիւն մը հիմնել : Զիրենք սիրող այրերու բարեկամներն են կիները : Բարեկամութիւն մը արական իմաստով չի սղմիր կանացի հոգեոյն մէջ :

* * *

Բանաստեղծները սիրականներու արցունքները կ'երգեն միշտ , չազի ու ցողի մարգարտի ու յակինթի յաւիտենական նմանութիւններով :

Լաց , ո՛ կուսիկ , զի արտատուք Կուսին ի բիր են մարգարիտ :

Անոնք , որոնց ճակտին վրայէն տարալուծող մտածման շունչը անցած է , յոսման ամբողջ հրաբուխ մը կը ժայթքեն հանգէտ ծերերու արցունքին , որ ամօժանելի կերպով երաշտական ամստի մը տպաւորութիւնը կը ձգէ :

* * *

Մեծ հոգիները պղտիկ , ֆիզիքական ցաւերէ կը սոսկան , որովհետեւ իրենց մեծութիւնը չեն կարող իրարկել հոն : Մեծ հոգիները , պղտիկ ցաւերու ատեն ուրախ տեսնելի յատ հազուադէպ է : Նկարագիրները վիրաբուժական գործողութիւններու ատեն միայն կը յայտնուին :

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԼԵՒՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ

(ՄԻՒՆԻԲ)

Ե.



Ա. Ռ. Ա. Ի. Ը պարտէզի
դռան սանդուղին վրայ
նստած, խոշոր պնակի
մը մէջ իր գոգը դրած
կանաչեղէնի աճողին
կոյսը կ'ըստըկէր ձեռ-

քի փոքրիկ զանակովը : ԼՈՒԱ, ծանր ու
միակերպ :

Նոյն միջոցին էր, որ դրօսնողի հանդարտ
քայլերով երևցաւ Մինէ ծառերուն ետեւէն,
յարգէ զխարկը բռնած ձեռքը, ու ձեռքերը
կապած ետին :

Նոյն հանգիստ քայլերովն ալ մօտեցաւ
պառաւին, ու դէմը կեցաւ :

— Դեռ չեկա՞ւ. հարցուց վերջինը :

— Է՛, թո՛ղ, մայրիկ. անոր հետ դործ
բանել չլինիր : անշնորհք սղայ է :

— Քիչ մըն ալ համբերէ՛, աղջիկս. երեւի
գործ մը պատահեր է. ինքը ինծի ըսաւ որ
չուտով պիտի դառնայ. ան ըսածը կը պահէ :

— Մայրիկ, չիտակ ըսէ՛, չառ կը սիրե՞ս
պղտիկ աղապ. հարցուց Մինէ յանկարծ :

Պառաւը հայեացքը կանանչեղէնէն բարձ-
րացուց, ու խորշումած այտերուն մէջէն
այնպիսի ժպիտով մը աղջկան նայեցաւ, որ
այդ տեսակ հարց տալն անգամ ծիծաղելի կը
գարձընէր : Բայց իսկոյն ան մը քաշեց թե-
թեւ, աչքերը ձգեց նորէն պնակին, ու շա-
րունակելով ստըկելը՝ աւելցուց .

— Մեղք որ հիմակուան ճահիլները քիչ
մը ուրիշ ձեւի են. մարդու խելքը բան չի
կտրեր : Խելացի, հասկըցող աղայ. փոխանակ
չէ՛ք-չնորհք գործ մը բռնելու, այդ խնթի -

մենթ զիրքերուն ու պատկերներուն ետեւէն
է ինկեր, Խելքը միտքն ալ շարունակ դուր-
սերը. երեք - չորս տարին անգամ մը հազիւ
երեսը կը տեսնենք մէկ-երկու օր, ու հայտէ՛,
կը ձգէ կ'երթայ նորէն օտարներուն մէջ,
խոթ լմարդոց ձեռքը. ոչ մէնք խնդալ
կրնանք իր վրան, ո՛չ ալ ինքը հանգիստ ապ-
րիլ. օտարին հոգն է. մարդ միայն իրեն-
ներուն քովը ապրելու է :

— Է՛, մայրիկ, օտարներուն մէջն ալ
աղէկ մարդիկ կան, ինչո՞ւ :

— Սուս, ծուռ մըն ալ դուն. այդ բա-
ներուն որ խելքդ հասներ՝ դուն ալ ծանր
տունդ կը նստէիր, ու դուրսերը չէիր քաշ
գար : Դէ՛, լեզուս բանալ մի տար. դուն
զեռ աղջիկ ալ ես. մինչեւ վերջը այդ մօռն-
առ զերասաններուն ու կանգը կտրած աղ-
ջիկներուն հետ :

— Ուրեմն ես հիմա կապը կտրած աղջիկ
եմ :

— Դուն. Աստուած չընէ. բայց անոնք
Դուն զեռ անփորձ ես միայն, ու ըրածդ
չգիտես, մէկ անգամ, որ պարապ ես : Հարստ,
աղաս ամէնքը կը դժգոհին այդ քու խաղա-
լէդ. բայց դժգոհելէն լինէ՛ կ'եղնէ. « չնորհքով
մարդ մը գտէ՛ք, կ'ըսեմ, կարգեցէ՛ք ու վեր-
ջացաւ դնայ » : Բայց որո՞ւ կ'ըսես. հասած,
միս-մինակ աղջիկ մը, ի հարկէ սիրտդ կը
նեղանայ. ամէն բան իր ժամանակը ունի,
ամէն տարիք իր պէտքը. քու տարիքիդ ես
վեց մանչ ունէի : Երիկդ քովդ, աղաքդ փէ-
չերուդ, ալ պտրապ բաներու ո՛չ ժամանակ կը
մնայ, ո՛չ ակորժակ :

Պառաւի այս կայտառ ու վստահ չեղտով
մը տրտատանած խրատականը Մինէի վրայ
զուարթ տպաւորութիւն մը կ'ընէր : Մէկ ու-
սումով ցտակեց անոր քովը, նստեցաւ սան-
դուղի ոտքը կնոջ կից, արմուկը դրաւ ծուն-
կին, ու զլուին ալ յենելով ձեռքին, խորունկ
չունչ մը առաւ, եւ հայեացքը պառաւին
ծիծաղելի լրջութեամբ մը հառաչեց :

— Այո՛, այո՛, մայրիկ, քու ժամանակդ
մարդիկ խելացի են եղեր :

— Ապրի՛ս, աղջիկս. դուն ալ ես խե-
լացի : ակտիւզ զիր ճերմկած կնկան խօսքե-
րուն. թէ՛ չէ՛ ինչի՞ է նման հասած աղջիկը
առանց մարդու. հաւատ՝ ինծի, մինակ
ղաւակներուդ երեսէն կը խնդաս . . .

Բիչ մը հեռուն , աան կից , պարտէզի տախտակէ դուռը յանկարծ ետ հրուեցաւ , եւ Հրանտ շտապ քայլերով դիմեց դէպ ի զոյգը :

— Հը՛ , դո՞ւն ես , բացականչեց պառաւր ինչո՞ւ ուշացար այսչափ . աղջիկան սիրտը հատաւ սպասելէն :

Մինէ առանց գիրքը փոխելու՝ ճակտին վրայէն տղուն կը նայէր :

Հրանտ լուռ մօտեցաւ , ու ձեռքը ա- նոր մեկնեց ժպտուն :

— Բարի իրիկո՛ւն . նորէն բարկացե՞ր ենք :

— Բարկանա՛լ . արդէն քու պարանոյզ հօրը իջնելը խնդութիւն է . բացականչեց աղջիկը հետ :

Ու յանկարծ ոտքի ցատկելով՝ աւելցուց .

— Ձե՞ որ բոլորովին պատրաստ պիտի լինէիր , նաւակը ազըսպարած , մինչդեռ հրա- մանքդ . ելեր ես թափառելո՛ւ . ի՞նչ բանի էիր մինչեւ հիմա . քիչ մըն ալ որ տընտընա՛տ արեւը մարը պիտի մտնէ :

— Դրացի ֆրանսացիին մօտ էի . դործ ունէինք , խօսքս կէս ձգել չէի կրնար . հրա- մաններդ բոլորը կը կատարուին . նաւակը ապսպրուած է արդէն . քու սիրած ճերմակ մակոյկդ . ես ալ այս վայրկեանէս ամբողջո- վին քու արամադրութեանդ տակը . ուրեմն ...

Պատասխանեց Հրանտ կտոր-կտոր , կեղ- ծուած պաշտօնականութեամբ մը . եւ յան- կարծ ծիծաղելով քաջեց ուժով մը աղջկան թեւէն դէպ ի տուն . ու հոնկէ ալ քանի մը վայրկեան վերջը փողոց :

— Իսկ դո՞ւն , շատո՞նց է որ եկեր ես . հարցուց ճանապարհին :

— Հրամմե՛ր ես , ժա՛մ մը կայ , անշնո՛րհը մարդ :

— Խեղճ Մինէս , ճանճրացեր ես , կ'երեւի :

— Է՛ , ճիշդ խօսելով՝ ո՛չ այնչափ . գոնէ ժամանակս կարծածէդ աւելի օգտակար կեր- պով անցաւ . նախ մօրաքոյրս սորվեցուց ին- ծի վարուելը թիւռ դնելու ամենալաւ եղա- նակը , վերջն ալ մայրիկը՝ երջանիկ լինելու ամենաշիտակ ճամբան :

— Մի՞թէ . կարելի չէ՞ այդ դադանիքին ինծի ալ մասնակից ընես . ո՞րն է այդ ճամ- բան :

Պահ մը առանց պատասխանելու քալեց

Մինէ տղուն քովէն . ետքը թեթեւ մը ճա- կատը կընճռելով՝ ըսաւ կէս-լուրջ , կէս- կատակ .

— Ահա ա՛յս , որուն վրայէն մինք հիմա կը քալենք :

— Վա՞յ :

Ու երկուքն ալ , այս չափով ետ քաշուե- ցան այդ հարցէն :

Նաւավարը երբ իր սովորական յաճախոր- դին մօտենալը տեսաւ , ճերմակ մակոյկը քաջեց նեղ ու փոքրիկ նաւամատոյցին . եւ ինքը չոքելով տախտակին վրայ բռնեց մակոյկի ե- զերքէն , որ զոյգը դիւրութեամբ մէջը մտնէ :

. . . Մակոյկը արդէն շատոնց անցեր էր ֆէնէս-Պահչէի փարոսին տակէն , ու քիթը շիտակ դէպի արեւելքի ցամաքը ուղղած ա- ռաջ՝ կը սահէր , մի՛շտ կիսավայրի ափին զուգահեռական :

Իրիկուան արեւը նարինջի կարմիր մը քսեր էր տեղ-տեղ ծովու անձուփ այտին . որու շիկնոտ ցոլացումներուն տակ ողողուած՝ Մինէ անփոյթ ու մեղկ դիրքով մը փռուելը էր զեկին անկիւնը , փոքրիկ ու ցած նստա- րանի թիկունքին . մէկ ձեռքը գրկիւ . զեկին չուանները բռնած , մինչ ձախը մինչեւ արմուկը մերկացուցած մակոյկի եզերքէն ջուրին մէջն էր կոխէր . ու աչքերը կէս մը դոյ՝ կ'երգէր մեղմ ձայնով :

Ռուսերէն ուսմանս մը :

Եւ Հրանտ կը ծըռէր ու կ'ուղղուէր թի- երուն հետ զուգընթաց . բոլորովին մեքենա- րա՛ր , լո՛ւռ , տեսակ մը հմայուած թիերու կանոնաւոր ճողրիւնէն ու ծլծրող կաթիլ- ներու ախորժալուր դաշնակումէն : Եւ այդ հոգեկան կաշկանդման մէջէն անյադ աչքերով կը զննէր մաս մաս իր դէմը փռուած ընկե- րուհին . անոր ողորկ նուրբ ու ճերմակ դա- տակը , որ նաւակի սուր եզերքին վրայ թե- թեւ մը ծալք էր տուել . անոր քօքէթ մը սեղմուած քօթէն զուրս ցայտող իրանը , որ իր երզին հետ կ'ելուէջէր . անոր՝ չըջաղ- գեստին տակէն հետաքրքիր զուրս նայող ի- րարու վրայ ինկած փոքրիկ անհանգիստ ոտ- քերը . ու անոր շագանակի մաղբերուն կարճ գանդուրները , որոնք ամէն կապանքի ան- հնազանդ , յարդէ լայնելու զլսարկին տակէն

ամէն ուղղութեամբ անոր քունքերուն ու ճակտին վրայ կը գալարէին :

— Նա՛, ուսումնասիրութեանդ արդիւնքը . խնդաց աղջիկը յանկարծ երզը կտրելով, երբ տղան վերջապէս գլխու ծանր դարձումով մը հայեացքը ծովուն ձգեց :

Հրանտ ժպտեցաւ միայն :

— Զգէ՛ թիերդ ու եկո՛ւր քովս . մե՛ղք ես , հոտ արեւը աչքերուդ մէջն է շարունակ . եկո՛ւր . քով քովի քիչ մը բանաստեղծութիւն խաղանք նորէն . սանկ գլուխս նորէն ուսիդ :

— Ո՛չ , ո՛չ . պատասխանեց տղան իսկոյն կտրուկ ու վախցած . եւ առանց դիտնալու ինչու՝ թիերուն հափը արագացուց :

— Այդպէս լո՛ւրջ , հա՛, հա՛, հա՛. ծիծաղեցաւ Մինէ՛ բարձր ու ամբողջ կրծքովը :

Ափի ժայռերը ու ծերպերը ձայնակցեցան աղջկան՝ անոր ծիծաղին ամէն մէկ շնչոր կրկնելով ու երեքնելով հաւատարիմ :

Հրանտ աւելի՛ լրջացաւ .

— Ինձի նայէ՛, Մինէ՛, մեր ըրածը վտանգաւոր խաղ է :

Ու՛ ձայնը դողաց :

Աղջկան սիրաւ սեղմուեցաւ . բայց իր յուզումը ընկճելու ջանքով նորէն սկսաւ անսանձ ծիծաղիլ : Այս ծիծաղը ալ առաջուանը չէր սակայն . արձագանգն անգամ չինժու կը հնչէր :

— Ես լուրջ կը խօսիմ , Մինէ : Վերջապէս պէտք է մեր դիրքը հասկընանք , թէ չէ կեղծ քողարկութեան կարիք չկայ . պարզ է , որ մեր զգացումները շատոնց են սկսած բարդուիլ . ու մեր յարաբերութիւնը քանի կ'երթայ այնչափ տարօրինակ կը դառնայ . այդպէս չէ՛ :

— Ենթադրենք թէ . վերջը . հարցուց աղջիկը աչքերը կծկելով :

— Վերջը ա՛յն , որ մեր վարմունքը բացարձակապէս անմտութիւն է : Միթէ ինքդ համոզուած չե՛ս , որ ինձի հետեւիլ չե՛ս կըրնար , որ մենք չենք կրնար իրարու կապուիլ :

Աղջիկը գլուխը հակ՝ ջղուտ շարժումով մը ղեկին թելը մատին էր փաթթեր :

— Եւ աւելին կայ : Ես քանի խորը կը մտածեմ , այնքան ինձի կը թուի , թէ իսկապէս մեր փոխադարձ զգացումներուն մէջ

կեղծ բան մը կայ . ճշմարիտ զգացումը ո՛չ այս տեսակ երկար-բարակ հաշիւներ ընելով , ո՛չ ալ այդ հաշիւներուն դէմ կանգ կ'առնէ : Մենք իրար չենք սիրեր , Մինէ՛. եւ եթէ կ'ուզես ինձի համար չափ հասկընալի է , որ մենք իրար չենք ալ կրնար սիրեր : Իմ խելքս իմ գործերուս վրան է , քու բոլոր էութիւնդ դերասանութիւնդ է խլած . իմ զրաղումներս քեզի համար օտար է , քու ուղեղդ լարող աշխատութիւններն ալ իմ շրջանակէս դուրս . մէկ խօսքով՝ ես գիտութեան մարդ եմ , դուն արուեստի աղջիկ : Իսկ հիմա մեր մէջ դարձածը կէս մը տխրութիւն է , կէս մը զգացումի պատրանք . համաձայն չե՛ս :

— Կատարելապէ՛ս . եղաւ աղջկան վերին աստիճան հանդարտ ու յստակ պատասխանը :

— Ուրեմն . . .

— Ուրեմն . . . այդչափ արագ թիավարելու պէտք չի կայ :

Հրանտ նեղօրտած ուսը ցնցեց :

— Այսօր երեւի ձախ կողմէդ ես անկողնէն ելեր : Զգէ՛ թիերդ , կ'ըսեմ քեզի , ու քովս եկուր : Այդպէս աւելի յարմար կարելի է թէ՛ փիլիսոփայութիւններ ըսել , եւ թէ՛ լսել :

Ու նեղ նստարանին վրայ մէկ կողմ քաշուելով՝ տեղ բացաւ .

Հրանտ , իրան , թիերը ձգեց . բայց փոխանալի անոր նստարանը անցնելու՝ դժգոհ դէմքով մը նետուեցաւ նաւակին յատակը աղջկան մօտիկ , արմուկը յենեց միայն անոր նստարանին , ու հայեացքը յառեց ծովուն :

Տղու այդ ընդոստ շարժումէն մակոյկը ուժով ձոճուեցաւ ու բարակ կոհակներու երկար շարքեր՝ կարծես վախցած՝ սրարչաւ սկսան փախչիլ նաւակին երկու կողքերէն :

Դէ՛ , հիմա շարունակէ՛, տեսնեմ , քու տափակ դատողութիւններդ . ըսաւ Մինէ՛՝ ձեռքը կամաց մը անոր ուսին դնելով :

Տղան միշտ լուռ . նստած էր անշարժ դէմքը անդին դարձուցած . ու ճի՛գ մը միայն նկարուած էր իր պինդ խածած ծնօտին , զսպուած չնչառութեան ու բռնկեցնեցող ամուր կծկումին վրայ . ճի՛գ մը տէր մնալու իր ուսող զգացումներուն որոնք դուրս յորդել կը ձգաէին :

— Հա՛, ի՞նչ ես յանցաւոր երախայի պէս աչքերդ վար կախեր . թէ՞ խիղճդ մաքուր է՞ գուցէ . մէջ մը ինծի նայէ՛, տեսնեմ . չիտա՛կ , աչքերուս մէջ , այդ քու խելացի աչքերովդ :

Թեթեւ մը բռնեց տղուն դունչը , ու անոր դէմքը իրեն դարձուց :

Ինչ կար Մինէի հայեացքին մէջ , տղան չի հասկցաւ . միայն յանկարծ ամէն մտածում թռաւ գլխէն , բարձրացաւ քիչ մը մակոյկին յատակէն , ինկաւ դէպի աղջիկը , թաղեց դէմքը անոր կուրծքին մէջ , ու զոյգ թեւերուն բոլոր ոյժովը անոր մարմինն գալարեցաւ :

Աղջիկը դիմադրութեան չնչին շարժում մը անգամ չըրաւ . զուտը ինկաւ ետ , թարթիչներուն ճեղքը փոքրացաւ . խածաւ վարի չրթունքը ու տոգունեցաւ :

— Աւելի աղէկ է անցնինք նորէն փիլիսոփայութեանդ . հծծեց վերջապէս անուժ ժպտով մը՝ տղու ճմուռնին մէջէն հազիւ խօսիլ կարողանալով :

Եւ Հրանտ նոյն բուն թափովը , որով աղջկան էր փարեր , հա՛ քաշուեցաւ նորէն , ու ձուռնկերուն վրայ նստած՝ կրթընեցաւ նաւակի կողքին :

— Կը տեսնե՞ս , կը տեսնե՞ս հիմա ինքդ , որ այլ եւս այսպէս շարունակել անկարելի է . ես ալ չեմ կրնար քեզի հետ քուղէն ու քուղին խաղար . ալ չեմ կրնար խեղդեր զգացումներս կատակի մը կամ սրախօսութեան մը մէջ , երբ ներսս ամէն բան տակնուվրայ կը դառնայ , երբ սիրտս խենթի պէս մէջս կը թըփըռտայ :

— Ա՛խ , զգացումներու պատրանք :

— Մինէ՛ , ինծի նայէ՛ . հաւտա՛ , որ այս քանի ատեն է ո՛չ չնորհքով աշխատիլ կրնամ , ո՛չ ալ տեղ մը հանդիստ մնալ . ո՛չ ուզածս կը հասկնամ , ո՛չ զգացումներս : Չէ՛ . այս ապուշ վիճակը ես շարունակել չեմ կրնար . չեմ ուզեր :

— Սակայն ինչո՞ւ այդ բոլորը . չէ՞ որ մենք իրար չենք սիրեր . չէ՞ որ մենք իրար չենք ալ կրնար . դուն գիտութեան մարդ , ես արուեստի աղջիկ . ի՛նքդ կ'ըսէիր :

Ու այս ըսուած էր անշարժ պահուած դիմադներուն մէջէն ներքին անզուսպ յաղթական հեշտանքով մը .

— Է՛հ , չգիտեմ . Մինէ՛ , ինչ ըսելս ինքս ալ չգիտեմ , ցաւն ալ հոս է :

Պահ մը մնաց անշարժ , ու ապա հանդիստ , մեղմ ու անընտ ձայնով մը շարունակեց՝ կարծես իր մտածումներուն մէջէն .

— Բայց ի՞նչ կեանք կը լինէր . քու սրամիտ ու չարածճի հոգիդ միշտ աշխատութեանս սեղանին շուրջը , քու ժպտոդ ու քրքիջդ սեղաններուս մէջ . հոն եւրօպական կեանքին մէջ , միշտ ձեռք ձեռքի . . .

Ու մէկէն կրքի բուռն զարկով մը դարձաւ , խլեց աղջկան զոյգ ձեռքերը . եւ աչքերը անոր մօլոր հայեացքին սեւեռած՝ վրայ տուաւ խայտացող շեշտով :

— Եկո՛ւր , Մինէ՛ , եկուր . թող ալ խաղն ու թատրոնը մէկդի . ինչի՞դ է պէտք այդ բոլորը . ի՞նչ երջանկութիւն կրնայ բերեր բեմը քեզի , եկո՛ւր , Մինէ՛ , եղբի կեանքիս ընկերուհին , եղբի կեանքիս ժպտը :

Աղջկան դէմքը տարօրինակ ծամածռութիւն մը հագեր էր . կարծես լար պիտի . շնչառութիւնը քիչ մը կանոնաւորել ջանաց նախ , ու ձեռքերը կամաց մը տղու ջղուտ սեղմումէն ազտանելով :

— Ե՛տ դառնանք . հծծեց նուազկոտ ձայնով :

Տղուն թափը կոտրւած՝ ելաւ հանդարտ , առանց ոչինչ ըսելու անցաւ իր տեղը ու թիկը վերցուց :

Նաւակը դանդաղ կիսաշրջան մը ըրաւ իր առանցքին վրայ ու ետ ճամբայ ինկաւ :

Մինէ չրթունքները պինդ սեղմած , ձեռքերը գոգը նստել էր իր անկիւնը . տեսակ մը ամփոփուած , կծկուած դիրքով , կարծես հնար եղածին չափ քիչ տեղ բռնելու համար : Հայեացքը սահել , գամուեր էր հեռո՛ւն Մարտարային բացերը ցոլցըլուն կէտի մը վրայ . կուրծքն էր միայն , որ դեռ միշտ անհանդարտ ու բարձր կը շնչէր :

— Երբէ՛ք , երբէ՛ք , այդ գնով , երբէ՛ք . հնչեց վերջապէս իր թոյլ զոզոջուն ու մտածումներուն մէջ խեղդուած ձայնը :

Հրանտ ոչինչ չառարկեց . ո՛չ իսկ դիմադներու թեթեւ ջնցում մը . միայն թիկը փոխանակ իրենց կանոնաւոր թաքտովը ջուրը պատռելու՝ յանկարծ ճողքեցին մակերեւոյթէն կաթիլներու ամբողջ բուռ մը նաւակին վրայ սրսկելով :

(Շարունակելի)



ԽԶՈՒԱԾ ԼԱՐԵՐ ՈՒ ԹՐԹՈՒՈՒՆ ԹԵԼԵՐ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Կ Ա Ր Օ (Մայկարա)

Իրենց ժամանակագրութեան կարգով, իմ երագահիւս պատանութեանս առաջին երգերէն սկսած, ամբողջ քերթուածներս «Մասիս»ի մէջ հետգնետե հրատարակել ճեռնարկած պահուս, տեսակ մը գուարբխաւուն տրտմութեամբ դիտեցի քե հոգեկան ու մտաւորական յեղաշրջութիւններ կը բաժնեն այսօր զիս այդ առաջին երգերու մէկ մասին ներշնչումն: Վասն զի հոն գտայ մեղկ յոյսեր՝ զորս ցաւագին հիասթափումներ սրբագրած են այսօր, մետաքսաւետ ոսկեգօծ երգներ՝ որոնք իրենց նազեղածովս առանգականութենէն քանդուած սարդի ոստայններու անկերպարան ու տխուր քայքայումներ միայն կը բողբուն: Սիրոյ ցաւեր կան հոն, ինչպէս նաեւ յուսախաբութիւններ: Ու երբեմն տեսակ մը շլարափութիւն՝ ուր հոգին կը միտի կեանքի մահափիւռ ու դառն ստացումին: Խարխալումի եւ անստուգութեան փորձիչ ու վտանգաւոր շրջան մը՝ ուրկէ շատեր անցած են, եւ որ կը տանի տկարները դէպի սեւ սերը գերեզմանի խոնարութիւններուն, իսկ հազուագիւտ Ուծովները կ'առաջնորդէ, կը հանէ կեանքի արեւաշատ ու լայն ճամբան:

Բանաստեղծի բազմահագագ, բազմալար ջութակին վրայ խզուած քելեր, պաղած ճօրեր են անոնց մէկ մասը, — այդ առաջին քերթուածներուն: Հոն կը գտնուին մերքեւնակներ ալ՝ որ գուշակել կու տան տեսակ մը բուռցիկ ու ոստոստուն ճաշակ, — ուրիշներու հաճոյքին համար անուշ մեղրը պատրաստող գեղապաշտ մեղուին ճաշակը: Ասիկա քերեւս հակասութիւններ ենթադրել տայ: Այդ հակասութիւնները, երբ անոնք մարտն են ու անկեղծ, բանաստեղծին փառքն իսկ են յաճախ, սիրոյ կարգին մէջ մանաւանդ, ուր «տիդեբանքիզմ»ը, — ամեն բանի մէջ իր մասնաւոր, յատուկ հրապոյրը փնտռելու տրամադրութիւնը, — ամենէն ներքին, ու գուցէ ամենէն անկեղծ վիճակն է մարդկային հոգուն: Իսկ երբ բարոյական նպատակի, գաղափարային ճգտումի տեսակետներէն, այդ հերոսան քերթուածներուն ու այսօրուաններուն մէջ նշանակութիւն հակասութիւններ, անոնք ալ պիտի սահմանեն աստիճանները այն բարեշրջութեան՝ որուն հետեւած է բանաստեղծին միտքն ու հոգին, անկեղծ եւ ինքնուրոյն մնալու միակ մտահոգութեան մէջ:

Ս Ս Ո Շ



Ի Ր Տ մը ունիս սառնորակ՝

Որ չունի տաք երակներ:

Զգացումներդ սիրամուկը՝

Հոն՝ սառնարան մ'են համակ:

Ինչո՞ւ այդ ցուրտն անարակ՝
 Խորն այդ լանջին սրբառակեր :
 Սիրտ մը ունիս սառնորակ՝
 Որ չունի տա՛հ երակներ :
 Գէշ կը բողճուս որ կրրակ
 Սրբախ արիւնն ու յոյզեր
 Թափեմ՝ լանջիդ քապիտակ :
 Հալի՛ գուցէ՛ սառն անտէր :
 Սիրտ մը ունիս սառնորակ :

4 Յունուար 93.

Ձ Դ Դ Ն Ը



ՈՐՁԱՆՔՆԵՐՈՎ խօսական ,
 Պրտոյտներով խենդ ու մենդ ,
 Հերմակ ձիւներն վար կուգան .
 Կարծես ունին յոյզ ու տենդ :

Եւ բամպակի պէս կակուղ ,
 Բայց պա՛ղ , շա՛տ պաղ , կը դիգուին ,
 Իբրեւ անհուն կարագիւղ ,
 Տանեաց վրայ մեր գիւղին :

Հերմա՛կ , ներմա՛կ , նեղիներմակ ,
 Երկինք , դաշտեր , ձոր ու լեռ ,
 Փողոց , տուներ , հողն համակ ,
 Նոյն իսկ ներմակ են մարդեր :

Բայց ո՛հ , ուրկէ՞ անդադրում
 Կը տեղայ ձիւնն քապիտակ ,
 Սառն ձրմեռուան մէջ արքաում՝
 Երկինքի լայն ծովին տակ :

* * *

— Վե՛րը , շա՛տ վերն , հո՛ն , հեռո՛ւն ,
 Խոտուքեանց մէջ անհունին՝
 Ետեւն ահեղ ամպերուն՝
 Զուարթունք՝ դրախտ մը ունին :

Պարսպացիկ հրեշտակաց
 Թափած փետուրն երկինքին՝
 Հերմակ , քերեւ , հողմասպաց ,
 Սառնորակ ձիւնն է . — կ'ըսեն :

14 Յունուար 93.



ՊԵԼԺ ԿԵԱՆՔԵՆ ՈՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ԺՈՌԺ ՌՕՏԷՆՊԱՔԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ)

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ԿՐԿԱՆ կորուստ մը եղաւ ֆրանսական գրականութեան համար Պելժ բանաստեղծին մահը՝ որ մեր միջավայրին տեսակէտով զուրկ է ու է շահագրգռող հանգամանք մը ունենայէ, որովհետեւ ամէնէն քիչ ճանչցուած հեղինակներէն մէկն է Ռոտէնպաք մեր մէջ, թէեւ իր մէ անհամեմատ կերպով ստորին գրողներու անունն ու գործերը դոց սորվողներու ջոկ մը ունենանք, գէշ ընտրելու և գէշ ալ հետեւելու այն վնասակար ունակութեան պատճառաւ, զոր մեր ցեղը ցուցուցած է միշտ, ամէն անգամ՝ որ օտար քաղաքականութեան մը հետեւած կամ օրինակած է զայն։ Մեր աշխարհաքաղաքացի տարրը՝ ըլլալ իր բարքերուն և կամ գրականու-

թեան մէջ, ա՛յն աստիճան գէշ ընդօրինակութիւն մը ըրած է, որ մեր այսօրուան շատ մը ընտանիքներու և գրողներու համադրութիւնը ամէնէն աններդաշնակ կարկտաններով ծածկուած աշխարհակ վերարկուի մը պիտի նմանէր, որուն նախնական տիպն ու գոյնը որոշելը բոլոր մը ախլը համբերու աստիճան դժուար պիտի նկատէինք։ Եւ ամէնէն գէշը հոն է որ այս կապկային ընդօրինակութեան ունակութիւնը որոշիչ յատկութիւն մը դարձած է մեր ցեղին համար, և ամէն անգամ որ մեր երեսին զարկած են այդ ունակութիւնը, մոռցած են ցանցառ բացառութիւններ, թէեւ հազիւ մատի վրայ համբուրու աստիճան բազմաթիւ, որոնք, այդ աշխարհակ համադրութենէն դուրս, ինքնուրոյն յատկանիշ մը կը պահեն՝ հակառակ հետեւողներ ըլլալու, ու փոխանակ օրինակելու կ'իւրացնեն օ-

տարին գեղեցիկ յատկութիւնները, անոնց խառնելով բան մըն ալ իրենց ըմբռնելու և կամ զգալու կերպէն:

Ռօտէնպաքը չճանչնալնու համար, իր վրայ գրուած առանձին ուսումնասիրութիւն մը անիմաստ պիտի ըլլար ինքնին, ու նոյն իսկ Պէլժ գրական շարժումին նուիրուած մասնաւոր յօդուած մը վերապահումով միայն օգտակար պիտի նկատէինք մերինին պէս հասարակութեան մը համար, որուն ընթերցասէր դասակարգը՝ ընդհանրապէս համբաւուած գրականութիւններու հետամուտ, գրեթէ բնաւ չէ շահագրգռուած պզտիկ երկիրներով և պզտիկ ալ անուններով, ու արհամարհօտ արդէն, զբաղիլ իսկ չէ ուզած անոնցմով, ու բնականաբար չէ ճանչցած անոնց ծնունդ տուող ազգակներէն ոչ մէկը: Բայց այդ պզտիկ երկիրներէն ու պզտիկ ալ անուններէն կան որ ամէնէն բողբոջուն և ամէնէն ալ խատուտիկ մտաւորականութիւնը ունեցած են, մինչեւ համբաւուած գրականութեանց ամբողջացուցիչ մասերը դառնալու աստիճան, ինչպէս Պէլճիգա՝ որ կրնայ անոնցմէ առաջինը համարուիլ: Սակայն հակառակ իր ունեցած գեղեցիկ և առողջ մտաւոր վերադարձումին, Պէլճիգա անտեսուած երկիր մըն է մեզի համար, որուն ոչ կեանքին ծանօթ ենք, ոչ ալ մտաւորականութեան. այսօր, նոյն իսկ 1890-95ի գրական բեղուն շրջանը անցուցած ըլլալէ ետքը, դեռ չինարէն բառեր կը մնան մեզմէ շատերուն համար պէլժ գրագէտներու անունները, որոնցմէ ոչ մէկը տեսնուած է մեր մամուլին մէջ, որ միշտ գրական արտադրութեանց միակ ընդունարանը կը մնայ դեռ մեզի համար: Բայց պէլժ քաղաքակրթութիւնը մէկն է անոնցմէ՝ որոնք օրինակ կրնան ըլլալ շատ մը ժողովուրդներու եւ կարծէ՛ ճանչնալ զայն իր բոլոր փութերուն տակ, որովհետեւ անոր դարաւոր դըլ-

ուածքէն շատ մը հետեւելու կէտեր կան առնուելիք, կեանքի ու մտաւորականութեան կրկին տեսակէտներով: Մանաւանդ մեզի համար, հետեւողութեան այդ պէտքը շատ աւելի կը շեշտուի. և արդէն, երկիր մըն է որ ամէն բանէ առաջ տաք համակրութիւն մը կ'արթնցնէ զինքը ճանչցողին քով ու կը հմայէ զայն իր անսպառ շնորհով: Եւ իր քաղաքակրթութեան հիմնական պայմաններուն մէջ շատ մը որոշ կէտեր կան՝ որոնք շատ մը ժողովուրդներու մտաւորական զարգացումին կրնան իբրեւ օրինակ ծառայել, եթէ երբեք անոնք իրենց աշխատող, տոկուն և յարատեւող նկարագրին միայնել ուզեն քիչ մըն ալ այն սքանչելի յատկութենէն՝ որ խահականութիւն կը կոչուի:

Ասիկա է գլխաւոր պատճառը որ այս աշխատութեան կը ձեռնարկեմ, ճշգրտօրէն ու որոշակի ներկայացնելու համար այդ քաղաքակրթութիւնը, հիմնուելով աղբիւրներու վրայ, որոնց ստուգութիւնն ու անկեղծութիւնը վեր է ամէն տարակոյտէ, Ու պիտի ջանամ մանաւանդ կարելի եղածին չափ ամփոփ ու համառօտակի ներկայացնել նիւթը, — առանց սակայն անոր ամբողջական յատկութիւնը ջնջելու, որովհետեւ մենք շատ ալ կարգալ չենք կրնար ու որոնեղութեամբ մը միշտ մէկ կողմ կը նետենք այն բոլոր գրուածները՝ որոնց արձակը խիտ է դուռը գլխու մը՝ մազերուն պէս, և որոնց մէջ շատ չեն երևար խօսակցութեանց գիծերն ու կարճ պարբերութիւնները:

Ա.

Չի կայ երկիր մը՝ որ դարեւոր յարաճուն շրջաններու մէջ Պէլճիգայի չափ պահած ըլլայ իր նախնական նկարագիրը, ազգային տարազը, զգալու և հասկացողութեան կերպը,

հաւատալիքներն ու աւանդութիւնները, վերջապէս այն բոլոր սրտիչ հանգամանքները՝ որոնք ժողովուրդ մը կը յատկանշեն: Երկրին բնական կազմութեան իսկ, այնչափ անգամներ եղծուելէ ու խաթարուելէ վերջ, այսօր պահած է դեռ իր դարեր առաջուան երեւոյթը, միշտ աւելի սիրուն և աւելի գեղեցիկ վերարծարծման մը շնորհիւ: Դաշտային հրապուրիչ տարածութիւններ և հովուական սիրուն կայքեր կան այսօր հոն՝ որոնք նախնի երկիրը կը յիշեցնեն իր ծաղկեպսակ արօտներով, խառնուրդի պուրակներով ու գաղջուկ մարմանդներով: Ժողովուրդը՝ արդէն իսկ աւանդապահ՝ միեւնոյն յատկութիւնը ցուցուցած է միշտ, իր ցեղին սովորոյթները անեղծ պահելով ու դործադրելով, ու քաղաքներն անգամ միշտ բան մը ունին որ հինին դըրոյմը կը կրէ: Նոյն իսկ Պրիւսէյ, հակառակ ամէնէն աւելի յառաջդիմութեան մարմաջէն բռնուած մայրաքաղաքներէն մէկը ըլլալուն, չէնքեր ունի դեռ, որոնք միջին դարու առպետական դղեակներուն կամ կոթական շէնքերու ձեւը կը պահեն, ու կան անոնցմէ՝ որոնք դարեր առաջուան աղգային դըրոյմը կը կրեն մինչեւ այսօր, ընդհանրապէս անկանոն ոճով մը յօրինուած:

Եւ արդէն իսկ գեղեցիկ քաղաքակրթութիւն մը ունեցող այդ երկրին ամէնէն կենդանի յատկանիշն է բնական հմայիչ գեղեցկութիւն մը՝ որ հակառակ հին ու նոր տեսարաններու և շէնքերու այդ անյարդար խառնուրդին, անխափր գրկած է քաղաքներն ու դաշտերը՝ անուշ բոյր մը և անուշ ալ թոյր մը տալով անոնց. «Միակ օրուան մը մէջ, կ'ըսէ Քամիլ Լըմօնիէ, Լիւքսեմպուրկեան անտառներէն ու հեղեղատներէն առտուն մեկնող ճամբորդը յաջորդաբար պիտի տեսնէ Սեւ Քաղքին՝

Թիթեղնոցներու երկրին⁽¹⁾ մրախառն ցորեկները, polder ներու⁽²⁾ պայծառ ու թարմ յետմիջօրէնները և մեծ ջուրերուն ալ հանդիսաւոր իրիկունները: Պիտի կտրէ անցնի ապառաժուտն ու ծառաքերձ անտառը, քաղաքներն ու դաշտերը, երկու գետեր և անհամար գետակներ, ու պիտի ճանչնայ հեփեսուտեան սահմաններն ու հովուական կայքերը: Եւ Առտէնի մէկ կատարէն սկըսող արեւին վայրէջքը՝ իրեն համար պիտի վերջանայ հանդիպակաց կողմին ծայրը՝ Ֆլամանտական տարածուն ծովն ի վար⁽³⁾»:—»

* *

Պէլճիգան կարելի է երկու առանձին մասերու բաժնել, Վալլօնի և Ֆլանտրը, ցեղային ազգակցութեան կապով միացած թէեւ, բայց իրարմէ բոլորովին տարբեր՝ նկարագրով, բարքերով ու քաղաքակրթութեամբ ալ: Վալլօնի բուն ֆրանսախօս մասն է, ինքնին լուիկ, հանդարտութենէ ակտիօզ եւ ինքնամիտի ցեղ մը՝ որ տեսակ մը վանականի լուիկ մեկուսացումով աշխատած է միշտ մըջլաններու պէս, եւ գրեթէ առանց աղմուկի օղակած է իր դարերը: Քաղաքներ ունի այսօր, որոնք լեւրան մը կատարը առանձինն բարձրացուած մենաստաններու կը նմանին, թէեւ ամէնէն ստուար բնակչութիւնները ունեցած ըլլան: Վալլօնի իր բովանդակ արտաքին յարդարանքին մէջ ճշմարտապէս քաղաքակրթ երկիր մըն է, զարգացած բազմամարդութեամբ մը, ներքնապէս միշտ անկեղծ

(1) Ֆլանտրի այն մասը՝ որ գործարաններու հաւաքում մը կը բարձրանայ եւ ուր հողը աշխատուելէն զրեթէ սեւցած է բլուրովն:

(2) Թմբապատ գոյտակայր:

(3) C. Lemonnier. — La Belgique.

պահած սակա՞յն իր ցեղային նկարա-
գիրը, և հինէն աւանդուած սովորու-
թիւններն ու հաւատալիքները: Ամէն
բան շէնցած է իր մէջ, դաշտերը քիչ
կերելան՝ մշակութեան յատկացուած
հողերու հետ, և երկրին ճարտարա-
ուեստը աւելի նուրբ արհեստներէ կը
բաղկանայ մեծ մասամբ:

Իսկ Ֆրանսերը՝ այդ կանանչ արօտ-
ներով ու հերկուած դաշտերով ծած-
կուած ծաղկաւէտ ու ծառախիտ երկի-
րը՝ ամէնէն յուզուած պատմութիւն-
ներէն մէկը ունեցած է:

Յարաճուն յուզման մէջ տապալարկող ցեղ
մը եղած են Ֆրամանները: Ֆրամանեան
գլխաւոր քաղաքներէն երկուքը՝
Կան ու Պրիւս, ատեն մը ամէնէն սու-
կալի հակառակութիւնը սնուցած են ի-
րարու դէմ ու երկարատեւ կռիւներով
իրար կործանելու աշխատած: Հոգե-
բանօրէն մեկնելով այս կէտը՝ խուժան-
ներու կիրքերը բռնկցնող աննշան դէպ-
քի մը ծնունդ կրնայ համարուիլ, քա-
նի որ Պէլժ ցեղը ընդհանրապէս, ըլլայ
Վալլօն և կամ Ֆրաման, միաբան ու ի-
րերասէր յատկութիւններ ցոյց տուած
է միշտ. ենթադրութիւն մը՝ որուն իբր
հաստատական պարագայ կրնայ յիշ-
ուիլ սա իրողութիւնը՝ թէ այդ երկու
երկուորեակ քաղաքները համակրու-
թեան վերջին ծայր սեղմ բահուանողով
մը զօդուած են այսօր իրարու հետ,
և երկուքը մէկ՝ խաղաղաւէտ անդոր-
ութեամբ մը ուժովցած, միասին կը
յառաջանան քաղաքակրթութեան համ-
բուն մէջ, ուր այնքան ալ նշանակելի
տեղ մը գրաւած են Պէլժի գալի միւս
քաղաքներուն պէս:

Ֆրամանները ուրիշ ո՛րեւէ ժողո-
վուրդէ աւելի ամուր կերպով կապուած
են իրենց ցեղային սովորութեանց ու
բարքերուն: Հինը՝ Ֆրանսարի մէջ ան-
վճար մնացած է ամբողջովին, քաղաք-
ները՝ իրենց շէնքերուն և արտաքին

յարգարանքին մէջ պահած են նախնակա-
նին միամիտ ու անյտարար կերտումը՝
որ մանաւանդ գիւղաքաղաքներու և
գիւղերու վրայ կը շեշտուի սքանչելի
հաւատարմութեամբ: Ազգային տարա-
զը՝ ինչպէս Վալլօնի զանազան մասերուն
մէջ, հոն ալ պահած է իր նախնի ե-
րանդներն ու ձեւը, եւ տօնավաճառ-
ներու օրերը ու տօնական հաւաք-
մանց միջոցին, ժողովուրդը ամէնէն
այլազան և ամէնէն գունագեղ հա-
գուստներու մէջ ամփոփուած կը պճրակի
քաղաքներու և գիւղերու մէջ՝ որոնք,
մշուշոտ առտունները մանաւանդ, ծի-
րանի գօտիէն ամբողջովին ողողուած և
հեռուէն նշմարուած կղզիներու կը նը-
մանին: Եւ այդ հանդէսներու կամ տօ-
նական օրերու միջոցին է միայն որ
Ֆրամանը դուրս կ'ելլէ իր սովորական
ինքնութենէն, ինքզինքը տալով երգի
ու խաղի, եւ օրն ի բուն պարելով ա-
նըսպառ գուարթութեան մթնոլորտի մը
մէջ՝ որ Ֆրանսարի մուայլ ու մերամաղ-
ձոտ երկիրը համակած կ'ըլլայ այդ օ-
րերուն: Ֆրանսերը՝ գործաւորներու եւ
գործարաններու երկիրն է ամէն բանէ
աւելի. աշխատող ժողովուրդին մեծ
մասը գործաւորութեամբ կը զբաղի հոն,
արտադրելու գերազանցապէս զօրաւոր
տենդէ մը բռնուած, որ այնքան կը
նպաստած է երկրին արդի ճարտարա-
ուեստական զարգացումին: Առտունները՝
քաղաքները դաշտերէն բաժնող արտ-
հետները գրեթէ ամբողջովին կը ծած-
կուին գործաւորներու խճողուած բազ-
մութեամբ մը՝ այր, կին, տղայ, որոնք
դաշտերը գրկող ընդհանուր կանանչին
մէջ հաստատուած գործարանները կը
գլխին, հոն իրենց քրտինքով ու աշ-
խատութեամբ շաղուելու համար երկրին
համբաւն ու զարգացումը:

Գործաւորներու այդ հանդարտիկ-
սերունդը, առաջին ակնարկով ճշմարիտ
հակապատկերը պիտի նկատուի հին

Ֆրամաններուն . . . յայց այդ արտա-
քին հանգարտ երեւոյթին տակ,
Ֆրամանները ներքնապէս պահած են
իրենց ցեղին որոշիչ հանգամանքները,
ու ճիշդ դարեր առաջուան մարդիկը
կը մնան այսօր, միեւնոյն նկարագրով
ու հոգեբանութեամբ:

* * *

Իր այս բաժանումներուն և իրարմէ
հիմնովին տարբեր նկարագրով ժողո-
վուրդներուն հակառակ, Պէլճիգա ա'յն
աստիճան հաստատ ինքնութիւն մը կը
ներկայացնէ այսօր, որուն նմանը գրեթէ
չէ տեսնուած նմանօրինակ բաժանում-
ներ ունեցող ո'չ մէկ երկրի մէջ: Հիա-
նալի է մանաւանդ այն ամուր ու ան-
խախտ միաբանութիւնը՝ որ Ֆրամանն ու
Վալլօնը իրար կը կապէ: Պէլճիգա իր
այսօրուան գեղեցիկ քաղաքակրթու-
թիւնը նախ ասոր կը պարտի, և յետոյ
աշխատութեան այն ընդհանուր եռան-
դին՝ որ սարդի ոտտայնի մը պէս գրկած
է բովանդակ բնակչութիւնը: Ամբողջ
երկրին մէջ չի կայ անկիւն մը ուր աշ-
խատութեան հետքը չնշմարտի, և ան-
մշակ հող՝ մանաւանդ Ֆրանսիոյ մէջ,
գրեթէ բնաւ չի տեսնուիր: Աշխատու-
թիւնն ու միաբանութիւնը՝ որոնք Պէլժ
ցեղին ամէնէն որոշիչ յատկութիւնները
եղած են սկիզբէն ի վեր, ինքնին բա-
ւական են արդէն ո' և է երկրի մը զար-
գացման. բայց ունենալով հանդերձ
այդ երկու սքանչելի քաղաքակրթիչ
ազդակները, Պէլժ ցեղը դեռ կը ցուցնէ
չա'տ մը գեղեցիկ յատկութիւններ՝ որոնք
իր նկարագրին ու հոգիին հիմը կը կազ-
մեն: Այդ ինքնին առողջ ու ջգուտ ժո-
ղովուրդը, ոգւով կառչած է իր երկրին
զոր այնքան գեղեցիկ տեսած է միշտ.
սքանչելի գիւղանկարներ կան հոն, դաշ-
տային խառնուրդի ու ծաղկեւէտ տարա-
ծութիւններ, արհաւրոտ ու խաժ խա-

րակներու յենած լեռներ, զուլալ ծոր-
ծորներ ու ծովեզերք մը՝ էսքոյի գիւ-
ղիչ ծովափը որոնց ամբողջութենէն գնւտ
նկարչական մասը կը յօրինուի այդ երկ-
րին, որուն կարեւորագոյն մասը ծած-
կող ցորենուտ արտերուն մէջ գիւղերու
բնակչութեան մեծ մասը կ'աշխատի օրն
ի բուն, ցանքի եղանակին իր քրտինքին
ոռողումը տալով անոնց, և հունձքի
պահուն ալ իր զուարթ երգերը մնջելով:
Պէլժը՝ ուր որ ալ գաղթէ, մտաւորա-
կան կամ ընկերական ինչ միջավայրի
մէջ ալ գտնուի, միշտ կը պահէ իր ինք-
նութիւնն ու ցեղային նկարագիրը. այն
գրողներու հոծ խումբը՝ որ այսօր, մեծ
մասամբ Ֆրանսա գաղթած, ֆրանսերէն
ու ֆրանսական ալ գրականութիւն մը
կ'արտադրէ, բնաւ չէ մոռցած իր եր-
կիրը, ինչպէս նաեւ ո' և է օտար ազդե-
ցութեան ալ չէ ենթարկուած, պահե-
լով միշտ իր ինքնատուութիւնը և նոյն
խիւ օտարներու ազդելով: Անոնցմէ չա-
տեր ամբողջ գործեր նուիրած են իրենց
հայրենիքին, — ինչպէս օրինակի համար
Ռօտէնպաք, — և իրենց արտադրու-
թեանց մէջ միշտ պահած են այն միտ-
թիւք, խորհող ու կէս մեղամոգձոտ Հու-
գին՝ որ Պէլժ ցեղին կը պատկանի, և
որ, մանաւանդ իր գերագանց անկեղ-
ծութեամբ, այնչափ գեղեցիկ գաղափար
մը կազմել կուտայ այդ կրկնապէս օրի-
նակելի ժողովուրդին վրայ, որ Եւրո-
պայի ամէնէն ուսումնասէրներէն ալ
մէկը եղած է հինէն ի վեր. Պէլժ գիւ-
ղացին ԺՁ. դարուն իսկ կարդալ գրել
գիտէր արդէն, և այսօր, դպրոցներ կը
վխտան բովանդակ Պէլճիգայի մէջ՝ ուր
կը գտնուին նաեւ չորս համալսարաններ,
ամէնքն ալ սքանչելի ծրագիրներու հա-
մեմատ հաստատուած:


Այս հիմնական գլխաւոր պայման-
ները՝ ինքնին բաւական են արդէն բա-
ցատրելու համար այն գեղեցիկ զար-
գացումը՝ որուն հասած է այսօր Պէլժ

քաղաքակրթութիւնը, մէկը անոնցմէ՝ որոնք Եւրոպայի լաւագոյններէն կը նկատուին: Պէլճիգա՝ արդէն իր բոլոր կողմերով, Եւրոպայի առաջնակարգ երկիրներէն մէկն է: Ապակեղրոնացման սքանչելի դրութեամբ մը, Պէլճիգայի իւրաքանչիւր քաղաքը ունի իրեն յատուկ վարչութիւն մը՝ որ այնքան այլապէս սիրունութիւն մը կու տայ երկրին ամբողջութեան: Հոն ամէն քաղաք իրեն յատուկ գեղապետական ճաշակը ունի: շէնքերը ոճի առանձնայատուկ նախասիրութեամբ մը պատրաստուած են, և իւրաքանչիւր քաղաքի Եկեղեցիներն ու Մայր-Եկեղեցիները, ամէնքն ալ իրարմէ տարբեր դիրքով ու տարբեր ալ կերտուածքով կը բարձրանան, կոթական արուեստին ուղղակի տիրապետութեան տակ: Ճաշակի և նախասիրութեանց այդ միեւնոյն տարբերութիւնը փողոցներու յարդարանքին մէջ ալ յստակ կ'երեւայ, և ազգային տարազն անդամ, քաղքէ քաղաք, գիւղէ գիւղ կը տարբերի, թէեւ միշտ հինին հաւատարիմ՝ օրինակը մնալով:

Բայց բոլոր ասոնցմէ դուրս, ինչ որ ամէնէն յատկանշանականն ու ամէնէն սիրունը կը մնայ Պէլճիգայի համար, ամբողջ երկրին մէջ տեսնուած այն հիանալի եռանդն է, որով ամէն Պէլճի կը ջանայ մղում տալ աշխատութեան, եւ առով իսկ ծնցնել արգասաւորող ազգակներ՝ որոնք գեղեցիկ ներկայ մը եւ գեղեցիկ ալ ապագայ մը պիտի ապահովեն իրենց արդէն իսկ զմայլելի եւ այնչափ ալ սիրուած երկրին:

Տեղի անճկութեան պատճառաւ յառաջիկայ անգամէն միայն պիտի սկսի «Սասիս» իր ընթերցողներուն ներկայացնել, ամէն տասն եւ ճիւղ օրը անգամ մը, Եւրոպական լեզուներով հրատարակուած կարեւոր գրական եւ գիտական հրատարակութիւններու ցուցակը, ու նաեւ ատոնցմէ ոմանց տարալոյծումն ալ (analyse) պիտի ընէ:

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ



Ա. ՀՈՒՍՄԵՐ Էտուառ Հերվէ (Edouard Hervé) կը վերջանայ ֆռանսացի նշանաւոր հրապարակաւորներու այն խումբը, որուն երրորդը եւ վերջինն էր ինքը՝ Միւս երկուքը, որոնց անունները միշտ իրենին կցուած էին, կոչուած են Բոէվօ Բառասօլ (Prévost-Paradol) եւ Ժան Ժաք Վայս (J. J. Weiss), որոնք սակայն հանդէպ կառավարութեան իւրենց ունեցած սկզբունքներով, վերջեր կը տարբերին Հէռվէէն: Հէռվէ սքանչալի մըն էր Անգլիոյ, եւ իր գլխաւոր երկու հեղինակութիւնները նուիրուած են այդ երկրին, Une Page d'Histoire Contemporaine, 1869 թ. եւ La Crise Irlandaise depuis la fin du XVIII siècle, 1885 թ. հրատարակուած: Ինքը իրիւս ակադեմիկան կը համատեղը այն բանը թէ ակադեմիս պարկեշտ մարդոց հաւաքասենեակն է (Salon des honnêtes gens), եւ ոչ թէ ամէնէն աւելի, ֆռանսացի նշանաւոր զրադեաներու հաւաքարան մը: Հէռվէ ալ Լըքոնդ առ Լիլի պէս ամբիկան կզգի մը վրայ ծնած էր Բրիտանացի հօրմէ մը, 1835 թ.: Ժամանակին իր քաղաքական հրապարակագիր ճանչցուեցաւ, Revue Contemporaineի եւ Courrier du Dimancheի մէջ իր գրած յօդուածներով, ճիշդ այն տեսակ տոնն մը, ուր մարերը ամէնէն աւելի տրամադրուած էին օրուան մամուլէն ազդուելու: Յիշալ պայմաններուն մէջ Հէռվէ Ժօզէֆ Բէռլէն (Joseph Perrin) կեղծ անունովը մեծ հռչակ հանեց: Ատնն մը եկաւ, ուր ֆռանսական կառավարութիւնը արգիլեց իրեն, ֆռանսայի մէջ հրապարակապրութիւն լնելը: Այն ատնն Հէռվէ սկսաւ իր յօդուածներու շարքը ժուռնալ առ ժուռնալ մէջ, 1867 թ. էր որ իր բարեկամը՝ Վայս կը սկսէր ժուռնալ առ Բառիի հրատարակութիւնը, որ զինքն

ալ եռանդի բերելով, հիմնել կուտար Սօլեյլ (Soleil), Ֆռանսայի 5 սանդիմնոց առաջին մեծագոյն օրաթերթը, Փորձը ցոյց տուաւ որ յաջողութիւնը իր սպասածէն ալ աւելի էր, Ամբողջ 25 տարիներ Սօլեյլ պատուաւոր հրապարակագրութեան մը իր-րեւ տիպար ծառայեց, Հէռլէ, կարելի չէ ըսել թէ ախար ֆռանսացի մըն էր, սա-կայն ապահովապէս տիպար ակադեմական մը եղաւ, որուն մահը կարեւոր կորուստ մըն է Ֆռանսայի համար, քանի որ Ֆռանսայի մէջ այնքան սակաւաթիւ են այսօր խոհուն եւ պարկեշտ հրապարակագիրները:

* *

W. G. Aston հրատարակած է այս օրերս ճարտական գրականութեան պատմութիւնը (History of Japanese Literature) ասիկայ իր նախորդներէն բոլորովին կը տարբերի անով, որ գրքին գրեթէ երկու-երրորդ մասը թարգմանութիւն է ճարտներէնէ եւ միայն մէկ երրորդը հեղինակին կողմէ գրուած պատմական կամ քննադատական կտորներ են, Սոյն հեղինակութենէն կը տեսնենք թէ ճարտն ամբողջ 12 դարերու ստուար գրականութիւն մը ունի այսօր, որու մասին մինչեւ վերջին ժամանակներս տակաւին գրեթէ բան մը չէր գիտցուեր եւրոպայի մէջ, ու այսօր չիկայ այն տեսակ աշխատութիւն մը, որով կարելի ըլլայ ճարտնցի բանաստեղծներու եւ արձակագիրներու հետքերուն հետեւիլ, Միայն Պրն. Ասթոն, որ իր կեանքին մեծագոյն մասը ճարտնի մէջ անցուցած է, իր հեղինակութեան մէջ կը յայտնէ թէ ճարտական հին արձակ գրականութիւնը այնպիսի վիթխարի էջեր ունի, որոնք նոյն իսկ կարող են հիտցնել ամէնէն նորաճաշակ եւ զարգացած գրականութեամբ ժողովուրդ մը: ճարտնի հին գրականութեան մէջ ամէնէն զարմանալի կէտը այն է որ լաւագոյն արձակագիրները կրնան են: ճարտնի մէջ, ԺԱ. դարու մեծագոյն գրողները կրնան եղած են ամբողջ, Անոնց գործերէն միոյն քննութիւնը կամ տարրալուծումը թերեւս ամէնէն շահեկան բաները յայտնէր արեւմտեան քաղաքակրթութեամբ ապրողներուն համար:

Ասթոն իր հեղինակութեան մէջ կը խօսի մինչեւ ներկայ օրերու գրական շարժման մասին, Թոքիոյի եւ Եօքոհամայի մէջ:

* *

Կարճ ժամանակուան մէջ գերմաներէն կրկին տպագրութեամբ երեւալէ վերջ, այս օրերս ուսերէն եւ իտալերէն լեզուներուն ալ թարգմանուած է գերմանացի սուսուցչապետ Մաքս Ֆէրվորնի (Max Verworn) Ընդհանուր Բնախօսութիւն [Algemeine physiologie) աշխատասիրութիւնը, Մեր զարգացած երիտասարդներուն կը յանձնարարենք ընթերցանութիւնը գիտնական-իմաստասէրի շունչով գրուած այդ հեղինակութեան, որուն մէջ կեանքի գիտութիւնը մշակուած է:


* *

Ռուսերը կը պատրաստուին շուտով տօնելու համար իրենց ազգային բանաստեղծին, Բուշքինի ծննդեան հարիւրամեայ տարեդարձը, Այս առթիւ տեղի կ'ունենան զանազան առաջարկներ, որոնցմէ ամէնէն շահեկանն է թերեւս այն, որով կուզուի Բուշքինի տունը, ուր մեծանուն բանաստեղծը յղացաւ իր գաղափարներուն մեծագոյն մասը, ծերացած գրական մարդոց պատուարան մը ընել:

* *

Արդէն շատերուն թերեւս ծանօթ է թէ Ֆռանսացի հմայիչ վիպագիր Ալֆօնս Տօտէ քանի մը անախձ ձեռագիրներ ձգած է, Սոյն ձեռագիրներէն մին, վէպ մը, La Caravane, քիչ օրէն հրապարակ կ'ելլէ: Պէտք է սակայն գիտնալ թէ նոյն վէպին միայն 100 էջը գրուած է նոյն ինքը Տօտէն, մնացեալ մասը գրուած է իր յուշատարին մէջ ապգ վէպը գրելու համար կազմած ծրագրին համեմատ, ուրիշներէ, Ֆրայէսի մէկ գործն ալ որ կիսկատար մնացած էր, իր մահուանէն վերջը միեւնոյն կերպով գրուեցաւ, եւ արդիւնքը ամէն կերպով գոհացուցիչ էր:





ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՈՐԽՏԻ ՏՂԱՆ

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ (ԱՐԱՔԻՐ)



ԵՌՆՈՏ սարաւանդներէն վեր ելած ատեննիս մեր փրփրած ձիերը անխնայ կ'կոխկռտէին՝ իրենց ստուերներուն տակ, այն զմրուխտ անքառամները (hélíchryses), որոնք չոր ու ցամքած, պճրլտուն բիրերու պէս մեղի կը նայէին համարձակ Կ'երեւակայէինք, որ Սարը Չիչէկի հիւսիսակողման այս վերջացող բլրակները, դարնան ու տմբան աթ իշխանա-կին գեղնոտ գունագեղութեան մը մէջէն. ծաղկներու բոյրովը կ'զինովցընէին կեօջեպէ ժողովուրդ մը, իր նախիրներով ու հօտազ-ներով: Հիմա, աշնայնի մեր կոյս ճամբոր-դութեան ատեն, անթառամն էր միայն, անժամանակ ծաղկներու բբուկը՝ որ պահ-պանութիւնը կ'ընէր ամայացած լեռնադաշ-տերուն, ցանցառ զրացնութիւնը վայելելով աշնան ճնծաղկին:

Նաւերը դիւղը ալ ծածկուած էր մենէ. ու Նիլիք եերին վրայ, կլիկ արտունձին փռու-ած շուքին տակ, արբշտած կ'զգայինք ինքզինքնիս բնութեան անաղօտ ճառագայթու-մէն ու յայտնութիւններէն: Սենկների սարա-հարթէն մինչև Չենեքէրի հին բերդակները՝ առշուած քարերու բրածայքով՝ երկնցած ու-ղին, իր ամէն մէկ բոյսերու ժխերով ու ցա-խերով վառեկած⁽¹⁾ իր քարտաւերու եւ վար-դենուկներու տերեւաթափ ծիղերուն բոլորքը

նշմարներ ցոյց կուտար անցնող քաղաքներու եւ մարդերու: Հոս ու հոն վժացող գարնան հով ջրերը հիմա հաղիւ ժռիկ ժռիկ կը յու-թային⁽²⁾: Դուշլար Շենիրին, քարկոծու-մը մը փշուած բեկորներովը կը նիրհէր արձակ գերեզմանի մը տեսքով. ու երբեմնի արգա-ւանդ այգիներու Թառան Թեքեսին հիմա ա-մայացած էր իր ճիւղուն ճնճուղներէն, որոնց բաղմածայն ներդաշնակութիւնը դարնան հը-մայքը կ'յօրինէ Սարը Չիչէկի այս վերջերին վրայ: Կլիկ արտունձը, միակ հովանին այս ամայութեան, քարերով ու գամերով ամբը-ցուցած էր՝ իր զոգը, ճիլքը ու խտուորնե-րուն, որոնք իրենց հաւատքը ծւիկ ծւիկ քուրջերով անոր ստտերէն էին կախած:

* *

Բարի էր մեր ալ ճիլքը, զոր Կլիկին կը յանձնէինք, Արակայ Նարեկացիի ուխտն հանելէ առաջ: Նարեկացիի այս ուխտը չին-ուած է Արակայ դիւղին մօտ, հարաւակողմը, Նաւերէն դէպ արեւմուտք, գրեթէ երկու ժամ հեռի: Հոսի ուխտը անշուք տեսք մը եւ մշտաբայց դուռ մ'ունի: Ուխտին ճիւղ-դիմացը. երկու ժամ հեռի, Չալքը Չալէն անդին յցուող ժառին վերեւ կ'տնտոխ «Գուրդլարլու» դիւղը Դըզըլթաշներու, ուրիշ անդին լեռներու ետին կ'պահուըտի Կամման Արեւմտեան կողմը լեռներու սառածը կ'մնան «Թեղուտ» եւ «Կամիտ» քուրդ դիւղերը: Հիւսիսի դէպ արեւմուտք երկարող բլուր-ները՝ թուփերով լատուտտիկ՝ կապոյտ, կար-

(1) Վառեկել = թփաւորիլ (տունկերուն):

(2) Յուլթալ = ժռիկ ժռիկ վազել (աղբիւրներուն):

միր ու լուրթ գոյներով երակաւորած, կ'պըս-
պըղան աշունի ջինջ արեւին տակ . ամէն
կողմ երկնքին յստակը գունազեղած է քարն
ու բլուրը , իր պայծառ անդրադարձումով :
Լերկ ու սուր ժայռեր հոս ու հոն կ'ծայրա-
տեն երկնաթոյր բլուրները , մեռնող բնութեան
մը գերեզմանաքարերուն յուրա մարմնուքը
մաղելով մեր վրան :

* * *

Արակայի Նարեկային հանգրուանն է այն
բոլոր միմունջներուն , որոնք արցունքի ու
խնդուքի նուիրագործումով կը կրօնաւորին ,
Հայուն , քրդուն համար , որոնց Շամսա Փիրն է
Նարեկային , իր այս լեռնուտ մենարանին մէջ ,
Քրդու լաճերու ճժեր իրենց պլպլուկ մօրերնուն
հետ , հոս է որ կը վազեն երկնառաք սլացումը
տալու իրենց խնդիրքներուն . ասկէ զատ ալ
ուրիշ ճամբայ չի կայ կարծես զէպի երկինք
դրկելու բոլոր մաղթանքները , հոգիի ճննճե-
րող ըզճանքներու խնկաբոյրին հետ : Նարե-
կացի իր կեանքի բոլոր օրերուն , ու իր յի-
շատակի ամբողջական վերկենդանութեան ա-
տեն զատապարտուած է միշտ կենդանի բուր-
վառ մը ըլլալու այն ազօթող հոգիներուն
համար , որոնք աւելի կ'եններուն ըլլալ կ'ե-
րեւակայուն : Տեսնելու արժանի բան մըն է
այն ոգեւորութիւնը , զոր յոյց կուտան քուրդ
կիներ ու աղջիկներ «Շամսա Փիր»ի ուխ-
տազնացութեան ատեն : Դեռ չլուսցած ,
մութն ու լուսուն , չըջակայ գիւղերու մէջ
ուխտաւորութեանց ատեն՝ զրեթէ ամէն տու-
ներէ կ'լսուին նիլէքին հասրէթը քաշող մայ-
րերու եւ աղջիկներու պոռչաւորները :

- Մայրիկ ե՛ր , ուրիշներ կ'երթան ուխտի ,
մատաղ կ'տանին .
- Աղջիկ պառկիր , կէս գիշեր է , քունն
անուշ է գարունին .
- Մայրիկ , հէյրան ըլլամ քեզի , ա՛հ , ար-
շաղոյսն է բացուեր .

Մենք մընացինք հոս ու դացին դրացիներ⁽¹⁾ ,
Ուխտաւորութեան ղեկավարութեան հանդերձ-
ներուն խորը պահուրտող առոյգ կազմածը
ջղուա կերպաւորութեան մը պրկումը կը ցու-
ցեն : մանրկեկ ոսկիներու հիւսքը՝ չարուտ

իրենց ճակտին ու թուշերուն բոլորաբը , եւ
անսեթեւեթ խոսուար՝ ճակտէն զէպի վար
փնջող , ալ աւելի կ'ոսկեզօծեն այն սեւ բի-
ւերու նայուածքը , որոնց մէջէն ամբողջ
կեանքի մը վայրենի անուշութիւնը կը կաթի
եւ ձոնիկը , Նարեկացիի մատրան վէմ-քարին
տակի հող-մասունքը , մխիթարանքն է ամէն
անո՛յ , որոնք ծերութեան կամ խօթութեան
պատճառաւ զուրկ կը մնան բաղձացուած ուխ-
տաւորութենէն :

* * *

Ներսէ՛ մատրան սալարկին վրայ՝ քրդու
տղեկ մ'էր պառկած , զուլին բարձած՝ սե-
ղանին քարը : Ամբան տօթ օրերու հիւժող
տենդը մինչեւ ոսկրներուն ծուծը մտած էր
անոր՝ իր լեռնականի առուգութենէն դոժած
մարմին մ'էր մնացեր իրեն , դեփոքիւն , ուր
մեռելոյթի հրաւիրուած ճանճեր՝ զոհերու ճնն-
ճերէն շատցած՝ աղատ կ'անցուդարձէին անոր
բերնէն ու քթէն : Առաջին անգամն էր որ
այսօրինակ տեսարանի մը հանդիսատես կ'ըլ-
լայինք : Անխորհուրդ հետաքրքրութիւն մը
մեզ անխղճեց խռովելու քունը գերեզմանե-
րու այս մանուկ զրացիին : Հագիւ շարժում
մը կրցաւ ընել աչքերը բանալու . այսքան
ոյժ մնացեր էր վրան , Տղեկը դժուարաւ
պատմեց , թէ ինք՝ մօրը մէկ հատիկը՝ «Շամ-
սա» Փիր»ի ուխտովը ծնած էր , մօրը եր-
կիւղած ազօթքին իբր անուշ պտուղ . լեռնե-
րու տուարած կեանքին մէջ տենդը զրկած
էր զինքը իր երկաթ թեւերուն մէջ . ու եր-
կարածիք յապաղումներէ վերջ միայն եկած
էր իր զօրաւոր պաշտպանին ապաստանելու ,
անոր՝ համբոյրներէ մաշած քարերուն վրայ իր
բժշկութիւնը դանելու համար : Զինքը մինակ
զրկած էր մայրը , երկու ժամ հեռուէն , որ
օրուան՝ մը չափ երկար թուած էր իրեն ,
կարծես ամօթի այն զգացումով , զոր կը զգար
ինքը աւելի կանուխ սուրբին պաշտպանու-
թիւնը իր տղուն վրայ չհրաւիրելուն համար :

* * *

Ուխտի տղան , իր հիւանդագին տաղ-
տապումով , փստած՝ սալարկին վրայ , օրե-
րով խօսեցաւ մեզի մեր յիշողութենէն . լրք-
ուած , միս մինակ , լեռներու զուլսը նետ-
ուած , Նարեկայիի հովանիին տակ հաւատքի
զօրեղ յոյսէն օրօրուելով : Ու կ'մտածեմ ,
հիմա՛ , որ Սարը Զիչէկի խնկաբոյր թաւու-
քին մէջ , ուր ծաղիկը կը հոտաւէտէ , եւ ուր
անբառաւոր կ'վերկենցաղի մշտապես , այդ
ուխտի զեղնոտ զաւակը հակադրութիւն մըն էր :

(1) Քրդերէն բնագիրը .

— Տայէ , ուսովը խեղդ տհրըն
Զիւարէթէ խուրպան տըպըն .
— Խեղէ ուսովը յին նիւշաւը
Վախտ պհարը խաւ չիբինը .
— Տայէ , հայրան , սպահ փաքու
Ըմլըլէ ման տօր Ճիրանան չու . . .



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ ԶՂԱՅՆՈՒԹԵՆԷ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՀԱՍԱՐ

ՏՈՔԹ. ԴԱԻԻԹԵԱՆ



ԱՅ ԼԵՁՈՒԻ մէջ ջղային բազը լայն իմաստ մը ունի, եւ կարծես մէկ հարուածով կը սահմանէ բոլոր այն հիւանդութիւնները զորս բժշկական

զիտութիւնը, փստանիչներու, հիւանդութեան սկզբնաւորութիւններու եւ ուրիշ պարզաներու համար ուրոյն ուրոյն հիւանդութիւններու վերածած է, որչափ որ անոնք միեւնոյն հիւանդութեան ընտանիքի վերաբերած ըլլան:

Ջղային չըլլալու համար հարկ եղած առողջապահական օրէնքները գործադրելէ առաջ, անհրաժեշտ է զիտնալ թէ որոնք են ջղային զլխաւոր հիւանդութիւնները: Այս պոչադրութիւնը թերեւս պատճառ մը ըլլայ որ աղջկներու նոյն իսկ մանկութեան տարիքէն խնամք տանինք անոնց առողջ կերպով մեծնալուն, խնայած ըլլալու համար նաեւ զիրենք շատ անհաճութիւններէ, նոյն իսկ տանջանքներէ, որոնք ջղային անհատներու զիճակուած են:

Ինչպէս որ ջղային բաւար տարտամ նշանակութիւն մը ունի ընդհանրապէս մեր կիներուն համար, նմանապէս շատ քիչ հասկըցուած է թէ ի՞նչ կը նշանակէ ջղային դրո-

րիւն (système nerveux), եւ ի՞նչ է անոր դերը կենդանական գործարանաւորութեան (organisme) մէջ: Ճիշդ այս պատճառաւ կ'ուզէինք քանի մը բացատրութիւններ տալ ջղային գրութեան մասին, առանց զիտական մանրամասնութիւններու մէջ մտնելու:

Ջղային գրութիւնը երկու զլխաւոր բաժանում ունի. 1. Կեդրոնական մասը, որ կը բաղկանայ ուղեղէն, եւ ողնաժուճէն ու յետոյ մակերեւային (périphérique) մասը որ կը բաղկանայ մարմնոյն մէջ ամէն կողմ տարածուած միւս բոլոր ջիղերէն. այս երկու մասերը որոնք իրարու յօդուած են ամենասերտ ու անքակտելի կապերով կրնան սակայն առանձին առանձին հիւանդանալ, առանց իրենց յարակից միւս մասերը վատնակու. օրինակի համար թեւի կամ սրունքի ջիղերուն ցաւը ազդեցութիւն մը չկրնար ունենալ ջղային գրութեան միւս մասերուն վրայ. այնպէս ալ ուղեղի գործունէութեան անհաւասարակիւ մէկ վիճակը ու եւ է հետեւանք մը չունենար ջղային գրութեան համար: Բայց խնդիրը կը փոխուի անշուշտ երբ կեդրոնական մասին ու եւ մէկ հատուածը հիւանդութեամբ կ'ոնջանայ, որուն տնմիջական հետեւանքը կ'ըլլայ՝ այդ հատուածին հետ անմիջական աւելնութիւն, ունեցող ջիղերուն ալ ոնջացումը:

Բոլոր այս ըստածներէն կը հետեւի ուրիշն թէ ջղային դրութիւնը երկու կերպով կրնայ հիւանդանալ : Նախ՝ ջիղը կամ ջղային ըջիջը կրնայ հիւանդութեամբ, վերքերով կամ հարուածով մը ոչնչանալ : ու յետոյ՝ կրնայ նաեւ իր հիւսուածքին բնական վիճակը պահելով հանդերձ, իր ուժին, գործելու եղանակին մէջ հիւանդ նկատուիլ : Արուներէն ջիղը, որ ահռելի ցաւեր կը պատճառէ, երբ կտրուի ու մանրադէտով քննուի, կը տեսնենք թէ իր հիւսուածքին մէջ սննդական վիճակ մը չունի, թէեւ իր գործելու եղանակին մէջ սննդական է, քանի որ կը ցաւի :

Ջղային այն հիւանդութիւնները որոնցմէ զերծ մնալու մասին պիտի խօսինք այսօր, ահաւասիկ այս վերջին բաժանմանը կը պատկանեն, այսինքն, առանց հիւսուածքի թերութեան մը, գործելու եղանակին մէջ է որ վնասուած են : Այս դասակարգի հիւանդութիւններէն մէկ քանին ինչպէս Eclampsie, chorie, tremblement, vertige եւն. եւն. ժամանակաւոր ախտաժխտութիւններ են եւ մանաւանդ հիւանդին բարոյականին վրայ նշմարելի ազդեցութիւն մը չունին : Ներկայ յօդուածին մէջ պիտի չեղանք զխաւորաբար այն առողջապահական միջոցները, որոնց կերակուրներով epilepsieի, hysterieի եւ neurastenieի պատճառած անհաճութիւններէն կարող ենք հեռու պահել մեր խնամքներուն յանձնուածներու ապագան :

Դժուարակնճիւ հարց մըն է սակայն որուն կը ձեռնարկենք, քանի որ միայն բժշկը չէ որ դեր մը ունի, այլ նաեւ ծնողքը եւ մանուկներու բարոյական ու ֆիզիքական կրթութեանը հսկողներն ալ իրենց մեծազոյն բաժինը ունին ջղայնութենէ ազատ պահելու համար մանուկներու ապագան, որուն համար անհրաժեշտ է որ նախըզուշական բոլոր միջոցները ձեռք առնուին մանաւանդ աղջիկ աղոց առաջին տարիներէն իսկ :

Դիտումներէն ոմանք կը պնդեն թէ սաղմը իր մէջը կը պարունակէ ապագայ անհատին բոլոր լաւ ու յոռի ձիրքերը, եւ թէ կրթութիւնը անկարող է փոփոխել այդ վիճակը, չափազանցութիւն մըն է սակայն ասիկայ : Ընդունելով հանդերձ ժառանգականութեան մեծազոյն դերը, պէտք է գիտնալ

թէ բարեք կրթութեամբ մը կարելի է չատմեծ արդիւնքներ ձեռք անցընել :

* * *

Կանխողգուշական (prophylactique) միջոցներէն մէկն է բնակավայրը : Արդարեւ մեծ քաղաքները ջղային ծնողքներէ սերած մանկանց համար ամէնէն աննպաստ բնակավայրն են, մանաւանդ 3-13 տարեկան աղոց համար : Քաղաքներու անմաքուր օդը, նընտուկ կեանքը, աղմուկը, գիշերային համախմբումները, եւ այլն, այնպիսի պատճառներ են որոնցմէ զերծ պէտք է մնայ մանուկը, իսկ ընդհակառակը գիւղի կեանքը, հանգաւոր, առանց սիկառի մուխով լեցուած հաւաքումներու, մաքուր օդով, պարզ սնունդով, միշտ բնութեան ծոցին մէջ, իստէալ բնակավայրը, դրախտն է մանուկներու համար : Այս տեսակէտով գիշերօթիկ վարժարանները, կեդրոններու մէջ կառուցուած, բոլորովին անյարմար են : Ծնողք ջանալու են իրենց՝ ջղային տեսակէտով կասկածելի դաւանները, ցերեկօթիկ վարժարանները իրկել եւ կամ գիւղերու մէջ հաստատուած գիշերօթիկ դպրոցները :

Երկրորդ միջոցը կը նկատեմ մարմնամարզը : մեր վարժարաններուն մէջ աւանդուած մարմնամարզի խաղերը — այն ալ արական սեռի դպրոցներու — աւելի լարախաղացի յատուկ են, քան թէ մանկան մը մկանները ու ջիղերը զօրացունող վարժութիւն մը : Օգտակար մարմնամարզը այն է, որով բաց օդի մէջ առանց յոգնելու, մարմնոյն բոլոր մասերը հաւասարապէս կ'աշխատին, մտքի ամենալուրջ աշխատութիւն մը չկատարելու պայմանաւ : Խորդ ու բորդ դաշտի մը մէջ քայլել ու վազելը աւելի օգտակար է, քան թէ զոց անդ մը գործիքով մարմնամարզ ընել, ուր մարմնոյն մէկ քանի մասերը միայն կ'աշխատին եւ մաքին ալ յոգնութիւն կը պատճառեն : Մանաւանդով մեր խօսքը, ջղային թերութիւն ունեցող մանկան մը յանձնարարելի մարմնամարզը հետեւեալ երեք պայմանները ունենալու է .

1. Խաղերը պէտք է դիւրին ըլլան, այսինքն մանուկը պէտք է չուսով սովորի, առանց մտքի երկարատեւ աշխատութեան մը :

Առանց այն պայմանին, բոլորովին հակառակ արդիւնք մը յառաջ կը բերէ մարմնամարդը :

2. Մկանները, չափաւոր հեւք մը արտադրելու չափ պէտք է աշխատին, որով կործքը զարդացնելով, կր. գիւրացնեն արեան թթուածին դառնալը (oxygénation) ու անդառութեան կանոնաւորութիւնը, ինչ որ արդէն մարմնամարդի ձգմարիտ նպատակն ալ է :

3. Մանուկը պէտք է որ այդ խաղերովը հրապուրուի, ձանձրոյթ չզգայ եւ անհրաժեշտ է որ բացօթեայ անդ մը կատարուին փորձերը :

Այս պայմաններուն համապատասխանող խաղերէն են չրջագայութիւնը, վազելը, տըղայոց շատ մը խաղերը. ինչպէս իրարու վրայէ ցատկելը, գնդակախաղերը, պարանոյ գառկելը, եւն., եւն., եւն. :

Սոյն երեք մարմնամարդական միջոցներուն մէջ, մանաւանդ մեր աղջիկները շատ քիչ բան, գրեթէ ոչինչ կը կատարեն, ու ասոր համար է որ այսօր ամբողջ բանակ մը ունինք անարիւն (anémique) եւ ջղային աղջիկներու : Մարմնամարդական փորձերը իզական սեռին անպատշաճ բան մը նկատուած են մեր նախապաշարունակներով բռնաւորուած կարգ մը զուկներու համար. աւելորդ է ըսել թէ բացարձակ սխալ մըն է այդպէս մտածելը եւ պէտք է այդ կարծիքին դէմ մաքառիլ :

* * *

Երրորդ կարեւոր դարձանն է ջրաբուծութիւնը որուն վրայ ես անսահման հաւատք մը ունիմ, եւ կը ցաւիմ որ մեր բարքերուն մէջ դեռ բնաւ մտած չէ. ջղային աղաքը պէտք է շատ կանուխէն վարժեցնել պաղ ջուրի : Ծովի եւ գետի լողանքները, առչի զանազան ձեւերը, մարմինը կը զօրացունեն եւ ջիղերու վրայ առողջարար ու հանդարտեցուցիչ ազդեցութիւն մը կը ներգործեն, ինչպէս նաեւ պաղի վարժութիւնը մարմինը կը պահպանէ ցուրտէն առաջ եկած թոքերու կարգ մը հիւանդութիւններէն, որոնք մեր մէջ շատ մը աղայոց մահուան պատճառ իսկ կ'ըլլան :

Չորրորդ միջոցն է սննդառութիւնը. հոս մասնաւոր բան մը չունինք սակայն խօսելու. ամէն մարդ զիտէ թէ ոգիկց ըմպելիները,

չափազանց անդառութիւնը, գէշ տեսակէ ուտելիքները մեծապէս վնասակար են. իսկ իւրաքանչիւր պարագայի համար, որ անհատական է, բժիշկը միայն կրնայ սահմանել հարկ եղածը :

Հինգերորդ եւ ամէնէն կարեւոր կանխազգուշական դարձանը ջղային տկարութիւն ունեցող տղու մը համար, բարոյական դաստիարակութիւնն է :

Դաստիարակութեան առողջապահական մասը կենսական նշանակութիւն մը ունի, բայց զժաղդարար ամէնէն աւելի անտես առնուած է : Այս է որ պիտի զարգացունէ մանուկին մէջ բարոյական այն հանգամանքները որոնք կը կազմեն հաւասարակշիռ ու զօրաւոր նկարագիր մը, հաստատ կամք մը, ինքնավստահութիւն մը ուժեղ դատողութեան մը միանալով, բարոյական առողջութեան նշաններ ամէնքն ալ : Մեր մէջ գրեթէ միշտ զիպուածին ձգուած է առողջապահական դաստիարակութեան կիրարկումը կամ ոչ կիրարկումը :

Մեր ծնողքները արդէն, բնդհանրապէս որոշ գաղափար մը չունին դաստիարակութեան վրայ, մանաւանդ փոքրիկ աղայոց մասին : Ծատ մը ընտանիքներու մէջ, աղաքներէն պահանջուած բարոյականը քանի մը պատուէրներու մէջ կ'ամփոփուի, այսինքն աղմկայոյզ չըլլալ, մատը քիթին կամ բերնին մէջ չդնել, ձեռքով չուտել, ցեխին մէջ չկոխել, եւ այլն : Հանգիստ նստիլ ու ատով օրինակի համար մայրը չի նեղացնել, Բայց պէտք է խոստովանիլ թէ աղոց տրուած այս ուղղութիւնը բարոյական դաստիարակութիւն մը չէ, ժամավաճառութիւն է պարզապէս. որովհետեւ յոռի բնազդները, բնաւորութեան անհեթեթութիւնները, տկար ու քմահաճ կամքը, յամառութիւնը, եսամոլութիւնը, բարկութեան ու զրգիռներու հակամիտութիւնը աղոց մէջ արագապէս կը դարդոնան. նա մահաւանդ երբ ջլախտաւոր ծնողքներու յոռի բարոյականի օրինակը ամէն օր իրենց առջեւ սանձարձակ կը պարզուի :

Բարոյական դաստիարակութիւնը արդիւնաւոր ըլլալու համար մանկութեան առաջին շրջանէն պէտք է սկսի, այնպիսի տարիքի մը մէջ, ուր մանուկին միտքը մասնաւորապէս

յարմար է ընդունելու ու պահելու, կաղապարը դուրսն եկած սպառնորթ թիւններուն: Շատ ճիշդ է եթէ մանուկներու միտքը բաղդատած են քնէածի (hypnotisé) մը միտքին հետ, որ պատրաստ է հլուարար ընդունելու իրեն եղած թելադրութիւնները (suggestion): Քնէածի վիճակի մը մէջ մանուկներու զգացածը, ըմբռնածը խորապէս կը դրոշմուի իրենց միտքին մէջ եւ կրնայ ըլլալ չուկէտը բնաւորութեան մը, որ ամբողջ կեանքը տեսէ:

Ուրեմն Բելադրուքիւնը կրնայ գործածուիլ իբր միջոց մը բարոյական կրթութեան եւ իբր զօրաւոր ամօթիչ մը ժառանգական միտումներու: Կրնանք վստահ ըլլալ թէ ջըղային տրամադրութիւններ ունեցող մանկան մը բարոյական դաստիարակութեան մեծագոյն ազդակներէն մին է թելադրութիւնը, որովհետեւ այդ մանուկները մասնաւորապէս զգայուն են իրենց հաղորդուած թելադրիչ մղումներուն: Բարոյական դաստիարակութեան մը ատեն, պէտք է համոզել մանուկը թէ բոլորի է եւ թէ կարող չէ չարիք մը ընել: Նմանապէս, հաւատացնելու է իրեն թէ զօրաւոր կամք մը ունի, ինքզինքին տէրն է, որպէս զի հետզհետէ, ինքնիրեն հրամայելու ու կամենալու սովորութիւնը ունենայ:

Մեր մէջ ընդ հանրապէս այն ըմբռնումը կայ թէ աղաքները *quantité négligable* մըն են մեզի համար. մանաւանդ ուրիշներու ներկայութեան բնաւ կարեւորութիւն չենք տար իրենց: Բայց պէտք է զիտնալ թէ մանաւանդ ուրիշներու ներկայութեան երբ կարեւորութիւն կուտանք աղայոց, ասով ամէնէն զօրաւոր բարոյականացուցիչ թելադրութիւն մը կատարած կ'ըլլանք անոր վրայ: Ըսել աղայոց թէ այս ինչ կամ այն ինչ յատկութիւններ ունին, ատիկա յաճախ խթան մը կ'ըլլայ իրենց, որպէս զի ջանան իրենց վերադրուած այդ լաւ յատկութիւնները իրօք ստանալու: Ընդհակառակը յանցանքները աղայոց երեսին պէտք չէ զարնել ըսելով իրենց թէ ծոյլ են, անկարող են, եւն. հակառակ պարագային այդ պակասութիւնը իրեն թելադրած պիտի ըլլայինք եւ ոչ թէ ուղղած: Նոյնպէս երբ մանուկները պարսաւելի դործ մը կ'ընեն, պէտք չէ երբեք գէշ իմաստով մեկնել ատիկայ. որովհետեւ մանուկը ընդհանրապէս մի-

տմաբար բրած է եւ ոչ թէ գէշ դիտումով մը. ու երբ կ'ելլենք զիրենք իբր զիտակից չար մը դատապարտելու, թէ անիրաւութիւն մը ըրած կ'ըլլանք եւ թէ մասնաւոր դիտումով մը կարենալ ընելուն զազաւարը ներշնչած իրեն: Այս տեսակ պարագաներու մէջ ընդհակառակը պէտք է հասկցնել թէ սխալած է, թերեւ չէր կարծեր որ իր ըրածը գէշ հետեւանք մը կրնար ունենալ:

Մանուկ մը, պէտք է կանուխէն վարձեցնել ինքնավստահ ըլլալու. ասոր համար զինքը չըջապատողներէն պէտք է քաջալերուի այդ մասին: Պէտք է սիրայօթար կերպով ընդունիլ մանկան ըրածները. միայն եթէ անհրաժեշտ պարագայ մը ներկայանայ, անուշութեամբ իրեն հասկցնել որ եթէ սապէս ընէր աւելի լաւ. պիտի ըլլար, աւելի լաւ պիտի յաջողէր. մէկ խօսքով շատ կենսական է որ աղաք վեհերոտ, ամչկոտ չըլլան:

Երբ աղու մը կոշտ կերպով կը պռռանք թէ չհասկնար, չգիտեր, չկրնար ընել եւ կամ կը ծաղրենք իր արարքները, այսպէսով իր անձին վրայ ունեցած վստահութիւնը ջնջած կ'ըլլանք. ժողովրդական իմաստուն առած մըն ալ արդէն կ'ըսէ որ, եթէ մէկուն քառասուն անգամ խնդ-ըսենք խնդ կ'ըլլայ:

Պէտք է նաեւ վարժեցնել մանուկները կամենալու, իրենց ուղածը կարենալ գործադրելու. ասոր համար յարմարագոյն միջոցն է աշխատանք մը յանձնել իրենց, պայմանաւ որ երկար ատեն այդ աշխատանքը իրենց կարողութեան չափէն պակաս ըլլայ եւ իրենց զարգացման աստիճանին հետ միայն աճի աշխատութեան դժուարութիւնը: Իսկ եթէ մանուկը ինքզինքը անկարող գտնէ իրեն տրուած աշխատանքը կատարելու, այն ատեն փոխանակ օգտաշատ վարժութիւն մը, ուշադրութիւնը եւ կամքը կրթող միջոց մը ըլլալու, ընդհակառակը իր անկարողութեանը իբր ապացոյց մը պիտի ծառայէ այդ աշխատութիւնը եւ պիտի յուսահատեցնէ զինքը, որուն հետեւանք, մանուկը կամաց կամաց պիտի կորսնցնէ իր անձին վրայ ունեցած վստահութիւնը եւ պիտի սկսի տարակուսիլ ինք իր վրայ:

Յոռի քնազգներն ուղղելու համար, լա-

ապագոյն դարմանն է զարձեալ օրինակով ու պատուէրով թելադրութիւններ ընելը : Տղոց հաստատակամ ըլլալ, սորվեցնելու համար պէտք է իրենց հանդէպ հաստատակամ ըլլալ : Անոնք կը հիանան ուրիշներու զօրութիւնը կամքին վրայ, եւ որովհետեւ միշտ իրենց չուրջը գտնուող անձանց օրինակէն կ'ազդուին ամէնէն աւելի, ուրեմն պէտք է ըստ այնմ որոշել մանկանց բարոյական զննտիրաւակութեան հսկող անձերը : Անհրաժեշտ է միանգամ ընդ միշտ հասկցնել մանուկներուն թէ իրենց տըրուած հրամանները բանաւոր են եւ իրենց համար օգտակար, որպէս զի վարժութիւն վստահաբար հնազանդելու, եւ անոնցմէ այս հնազանդութիւնը սպասելու համար պէտք է դաստիարակ կամ ծնողք, անգրեցութիւն մը, բարոյական հեղինակութիւն մը ունենան մանուկներուն վրայ : Սոյն հեղինակութիւնը ձեռք անցընելու համար սակայն պէտք չէ տղոց մէջ կամքի սլօք ոչնչայնել :

Պէտք է որոշ կերպով գիտնալ թէ ո՞րն է հշմարիտ հեղինակութիւնը, եւ ինչպէ՞ս գործադրելու է զայն : Կիւչո (Guyau) հեղինակութիւնը հետեւեալ կերպով կը բացատրէ . « Հեղինակութեան տարրերն են . 1. Գորով ու բարոյական յարգանք , 2. Հլութեան վարժութիւն , 3. Երկիւղ » : Այս երեք տարրերէն վերաւորն է . գորովի զգացումը, որովհետեւ գորով եղած տեղը պատիժ ու խիստ միջոցներ աւելորդ կը համարուին : պատիժի արժանի տղան գորով չունի, եւ իր մասին սէր ու գուրգուրանք ցոյց աւելով միայն կարելի է իր մէջը գորովի զգացումը ստեղծել :

Յետոյ յարգանքը գորովի զգացման մէկ կերպն է : Իսկ երկիւղը բոլորովին կը տարբերի գորովի եւ յարգանքի զգացումներէն, եւ պէտք է որ հեղինակաւոր անձերը ամէնէն քիչ օգտուիլ ուզեն իրենց երկիւղ ազդող յատկութենէն : Երբ ուզենք պատիկները պատժել, պէտք է համուել որ արդարացի ենք զիրենք պատժելով ու նաեւ մեծ յանցանքներու համար պէտք է միայն պատիժի դիմել, հակառակ պարագային ապաւրդին կը մնան անոնք : Եթէ պատժուելէ վերջ մանուկը նորէն մեղանչէ, պէտք է աչք դոցել, չհասկնալ ձեւացնելով, ու այսպէսով չարը մարել :

Պատիժը, պէտք է առանց բարկութեան եւ առանց կոշտութեան տրուի, որպէս զի գէշ օրինակ մը չըլլայ : Նոյնպէս պէտք է ջանալ որպէս զի մանկան տրուած պատիժը բարոյական գոյն մը ունենայ, եւ զինքը պատժած ատենին ոչ թէ պատժէն վախնալու զազաւարը պէտք է ներշնչել իրեն այլ պատիժի արժանի եղած ըլլալու բարոյական վիշտի մը զազաւարը :

Պէտք չէ թողուլ որ մանուկը իւրաքանչիւր յանդիմանութենէ վերջ քէն ընէ, երեսը կախէ : այդպէսով գործուած յանցանքը սրբազրուած չլլար եւ մանաւանդ աղան կը յամառի միշտ միւսնոյն պակասը ընելու :

Ընդհակառակը պէտք է ամէն կերպով աշխատիլ որ զինքը յանդիմանող անձին նրկամամբ որ եւ է քննակալութեան զգացում մը չունենայ, որպէս զի ասով մարդու հետ սրբողելու սովորութիւն մը չը ստանայ, եւ աւելի փափաքի իր թերութիւնը ուղղելու, լոկ բարի խղճահարութիւնէ մը մղուած :

Գէշ տրամադրութիւնը (mauvaise-humeur) սրանհղութիւնը, չա՛տ անգամ սխալ կրթութեան մը արդիւնքն են : Երբ չարունակ կը յանդիմանենք պատիկները, պարապ տեղը կը հակառակինք իրենց, այն ատեն կը սկսին ինքզինքնին ժողովել, զաղտնի իրենց վշտին վրայ խորհիլ ու այսպէսով կը վարժուին արեւրութեան, եւ ապագային ալ բարոյական անկման ու յուսահատութեան հակամէտ անձեր կ'ըլլան :

Յաճախ ջղային ծնողքէ սերած մանուկները վերջին աստիճանի անախտ են, պէտք է ամէն բան ընել արմատախիլ ընելու համար իրենց սրտին մէջէն այդ մեծ թերութիւնը որ մեր մէջ շատ ընդհանրացած կ'երեւայ այսօր :

Այս տեսակ տղոց քով յաճախ կը տեսնենք նաեւ բուռն յուզման (émotivité) արամադրութիւն մը : Յուզումը ջղային դրութեան հիւանդոտ վիճակէն յառաջ կուգայ, այնպէս որ ամենափոքր բարոյական հարուած մը եւ կամ հակառակութիւն մը, ջղային կեդրոնական մասին վրայ ցուաւրին բաւական մը ընկելով կ'անդրադառնայ բոլոր գործարաններուն վրայ : Բայց կարելի է այս նոյն իսկ ընկերական ցաւին առաջը առնել, բարւոյն ըստ իր զայն, բարոյական ու ֆիզի-

քաղաքի կանոնադրութեամբ մը, առ ր համար պէտք է չտա մը միջոցներու զիմով, նախ պէտք է զօրացնել կամքը արդուն մէջ, անոր անառողջ յուզումները արտադրող ուղեղային կեդրոնները զօրացնելով, յետոյ ջրարուժութեամբ ու մարմնական վարժութիւններով զօրացնել ջղային գրութիւնը:

Շատ վնասակար է մանուկներու երեւակայութիւնը զրգուել սարսափեցուցիչ պատմութիւններ, ու ճիւղներու, դեւերու ահաբեկիչ նկարագրութիւնները բնելով, ասոնք մանկան մէջ վախի գաղափարը կը մշակեն եւ յաճախ քունը խանգարող՝ դիւերային սասկումներն ու բանդազուշանքները պ'ըլլան անոնք:

Սա ալ պէտք է շեշտել թէ յուզումը տարափոխիկ է, ուրեմն ծնողները կամ գաստարակները պէտք է մանուկներու առջեւ յայտնեն իրենց յուզումները, վիշտերը, վախերը եւ բարկութիւնները: Մանուկները կարելի եղածին չափ պէտք է հեռու մնան մեծերու առօրեայ կեանքէն, ուր յուզման պատճառներ չեն պակսիր շատ անգամ:

Արբունքի ժամանակ ջղային աղջիկներու վրայ հսկողութիւնը պէտք է կրկնապատկել, սեռային փափաքի բնազդին զարթնումը կրնայ ջղային գրութեան հաւատարակչութիւնը տակն ու վրայ ընել ու մոլութիւններու մղել զանոնք: հետեւաբար ինչ բան որ անոնց սեռային զգացումը ժամանակէն առաջ արթնցնելու կը նպաստէ, պէտք է իսպառ հեռացնել եւ մեր վերեւ նշանակած բարոյական ու ֆիզիքական դաստիարակութեան կանոնները ձշղիւ գործադրել անոնց վրայ, ինչպէս նաեւ մեր մէջ ընդհանրացած կեղծ ու չհասկցուած պարկեշտութիւնը մէկզի ձգելով, վարժեցնել աղջիկները լուալու, մաքրելու իրենց ծննդական գործարանները, ինչպէս կը մաքրեն իրենց ձեռքերն ու երեսը:

Այսօր կարելիին չափ մանրամասնօրէն բացատրելիք թէ ինչպէս ջղային ծնողներէ սերած մանուկներու բարոյական ու ֆիզիքական կանոնադրութեամբ մը առաջով, կրնանք զերծ պահել զիրենք իրենց ծնողներէն ժառանգած ջղայնութիւնէն: Յաստիկայ յօգուածով մը պիտի խօսինք այն միջոցներուն վրայ՝ որոնցմով կարելի է եթէ ոչ բուժել, գէթ մեծապէս մեղմացնել ջղային կրկնութեան առաւելանքները, անոնց, որոնք այսօր ամէն տեղ բանակ մը կը կազմեն եւ որոնք իրենց արտուր գոյութիւնը քաշկռակու դասապարտած են:

ՀԻՒԱՆԳԱՆՈՑԻՆ Ի ՆՊԱՍՏ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԻՆ ՍՈՒԹԻԻ

ՆԱՐԿԻՍ



ԻՏԻ - ԳՈՒԼԼԻԻ մզգային Հիւանդանոցին մէջ պատրաստուած հաղարէ ա-

ւելի հիւանդ, անկար եւ անտէր անձեւուն միւթարանք մը ըլլալու, բարիք մը ընելու որոշումով, տասն եւ ութը Տիւկիներէ եւ Օրիորդներէ բաղկացած կարգադիր մասնախումբ մը, յառաջիկայ փետրուար 21ին, իւնիօն Ֆրանսէզի սրահին մէջ տալիք ձայնական եւ գործիական նուագահանդէսին հրաւիրող իր մուտքի տոմսակները արդէն սկսած է ցրուել ամէն կողմ, անշուշտ սպասելով որ նպատակը գնահատուի, եւ որոշուածօրը նուագահանդէսին սրահը լեցուի եւ քաղաքացիներու եւ բարեսէրներու բազմութեամբ, որով ազգին Գթութեան այդ Տրոնին պատասպարեալները՝ որոնք զրկուածները, անժառանգներն են մեր ընկերութեան, իրենց հիւանդի, անտէրի եւ անկարի տառապանքներուն մէջ սփոփանք մը, թեթեւացում մը ունենան:

Ամէն ազգային անհատ որ դիրք մը եւ մեր Հիւանդանոցին ի նպաստ նուագահանդէսին տոմսակը վճարելու կարողութիւնը ունի, իրրեւ իր ընկերական պարտաւորութիւնը պէտք է փութայ օգնութեան հասնիլ մեր հասարակութեան կարօտ եւ հիւանդ դասակարգին: Ընդունուած ճշմարտութիւն մըն է թէ ամէն բանի մէջ տկար կողմին ամէնէն աւելի ուժ պէտք է տալ, միշտ հաւա-

սարակչութիւնը պահպանելու համար։ Նոյնպէս հասարակութիւններն ալ պէտք է օգնութեան հասնին իրենց մէջ գլուխուած հիւանդ և կարօտ դասակարգերուն, ասով անոնց ընդհանուր պատու հաս մը ըլլալու հաւանականութեան առաջըը առած ըլլալու համար։

Յաջողութիւն կը մաղթենք սոյն մարդասէր ձեռնարկի գլուխ կեցող ազնիւ Տիկիններուն և Օրիորդներուն, իրենց կատարեալ յաջողութեան համար մեր անկեղծ ցանկութիւնը յայտնելով։

* * *

Մեր Դաւ Լիւզ. Հիւանդանոցի պատըսպարեալներուն ի նպաստ նուազահանգէսի մը համար կիներու այս գործունէութիւնը կը թելադրէ ինձ քանի մը գիտողութիւններ ընել։

Կիներու անհատականութեան մասին խօսող նախորդ յօդուածի մը մէջ կը շեշտէի այն կէտը թէ կիները ընկերական գործունէութեան մէջ կարեւոր մասնակցութիւն մը պէտք է ունենան։ Մանաւանդ մերինին պէս հասարակութեան մը մէջ, ուր բարիք ընողները այնքան քիչ են և բարիքի կարօտները այնքան շատ, կիներու այդ մասնակցութիւնը թանկագին օգնութիւն մը պիտի ըլլար կարօտեալներուն։

Մանաւանդ այս օրերս դաւառներէն չափազանց աղքատութեան և դաժան ձմեռի մը տխուր լուրերը կը հասնին Պատրիարքարան։ Անօթութենէ և ցուրտէ միայն մեռնիլը ապահովարար մահերու ամէնէն աւելի արհաւիրքով լեցունէ, և ձմեռը սկսելէն ի վեր այդ կարգի մահեր են որոնք ծայր տուած են դաւառներու մէջ։ Ամէնէն ծանր վիճակի մէջ գտնուող տեղը Վանն է, ուր մեր Պօլսեցի կիներու քոյրերը թերեւս դիեցիկ մանուկները իրենց գրկին, անօթութեան մատնուած են։

Տեղը չէ՞ կոչում ընելու զարգացած սիրտ եւ միտք ունեցող տիկիններուն, օրիորդներուն, որպէս զի դիմեն Պօլսոյ բոլոր հայ մայրերուն, օգնութեան հասնելու համար Վանի չքաւորութեան հետեւանքով անօթութեան եւ կորուստի դատապարտուած մեր տոհմակիցներուն։

Ամէն կերպով ապահով կրնանք ըլլալ, որ Վանայ չքաւորներուն օգնելու համար կիներէ կազմուած յանձնախումբ մը շատ կարեւոր դումար մը կարող էր հաւաքել իր հեռւոր, ցաւատանջ քոյրերուն փութացնելու համար։ Այլիլը շատ բխցած կերեւան մեր մէջ բարիք ընելու համար, պէտք է որ մեր կիները հակազդակն ըլլան այդ ընհանուր արական բխցման։






ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ե Ի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

ՅՈՒԱՆՍՍՅՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Մ . Ե .



ՕՐԱՒՈՐ կամք մը,
ինկած պայմաններու
հանդէպ, կամ շփոթ
թուփիւններու առեւն

ամէնէն անհրաժեշտ բանն է, վերջ տալու
համար, մէկ անգամէն, այն բոլոր հի-
ւանդադին վիճակներուն, որոնք ան-
հասները կամ ընկերութիւնները կը
թուլցնեն: Պաշտօնապէս հիւանդի մը ճգնա-
ժամին մէջ է այսօր ու բովանդակ
երկրին մէջ կը նշմարուի տեսակ մը
վարչական տկարացում, որուն հետե-
ւանքով նախարարութիւն, բանակ, ժու-
ղովուրդ իրարու դէմ կը գտնուին:
Տրէյֆիւսի խնդիրը ոչ թէ անհատա-
կան է ֆուանտայի համար, այլ ցոյց
կուտայ մտքի և ընկերական այն կայու-
թիւնը, որուն մէջ այլեւս արդարու-
թիւնը և ուղղամտութիւնը չեն կարող
գնահատուիլ, և անհատական ու ըն-
կերական կըքերը, յուզումները դէմ
դէմի կուգան, փրփուր ժաթքելով ի-
րարու: Այդ տեսակ պայմաններու մէջ,
նոյն իսկ հանրային կարծիքին դէմ դնե-
լու համար, կամքի ոյժ մը պէտք է երեւան
գայ, որ իր ազդեցութեամբը յաջողի
այդ բոլոր շփոթութիւններու պատճա-
ռին վերջ մը տալ:

Փէլիքս Թոու, թէեւ ամէն կուսակ-
ցութիւններէ վեր, հանդարտ մէկն էր,
բայց իր նախագահութեան միջոցին
յարուցուած ներքին խնդիրներուն հան-
դէպ կարող չեղաւ յայտնուիլ իբր կամքի
ոյժ մը, որուն հետեւանքովն էր որ Տրէյ-
ֆիւսի խնդիրը յետոյ այնքան մեծ
համեմատութիւններ կ'առնէր: Պրն.
Փէլիքս Թոուի քաղաքականութիւնը երկ-
րին ներքին խնդիրներուն տեսակէտէն
կը կայանար ոչ մէկ կուսակցութեան
կողմը բռնելու մէջ, և սակայն միեւնոյն
ատեն կը ձգէր կուսակցութիւնները ի-
րենց պայքարներուն մէջ, առանց ինքը
կատարելու այն զօրաւոր միջամտու-
թիւնները, որոնցմով կուսակցութիւն-
ներու միջեւ եղած առկա խնդիր-
ներուն վերջ մը կարելի էր տալ:
Ինքը նկարագրով աւելի անգոյն, քան
թէ կրաւորական, չը գիտցաւ կամ չու-
զեց իր մասնաւոր քաղաքականութիւնը
ունենալ, որ ոչ թէ կուսակցական ըլ-
լար, այլ ընդհանուր մարդկային սկզբ-
բունքները պաշտպանող, ու ասով ինքն
ալ իբրեւ ոյժ մը զգացուէր երկրին մէջ:
Փէլիքս Թոուի երկրի ներքին գործերուն
մէջ ցոյց տուած այս ձեռնպահութիւնը
թերեւս իր չափաւոր հանրապետականի
սկզբունքներուն արդիւնքն էր: Որքան
որ ձեռնպահ էր Փէլիքս Թոու երկրին

ներքին քաղաքականութեանը մէջ, նոյն-
քան ալ չըջահայեաց էր հանդէպ օտար
պետութիւններու. և անոնց նկատմամբ
իր դարպասողի բնաւորութեամբ հա-
մակրանք մը չհասած էր բոլոր օտար ար-
քունիքներու և դահլիճներու մէջ:

Հասարակութիւնները բնադրական
առողջ հակումով մը անցածի մասին զօ-
րաւոր յիշողութիւն մը չունին ընդհան-
րապէս, և ամէնէն աւելի կ'աշխատին
պարագայի ներկայացած ատեն,
իրենց անցելոյն մէջ ամբարած փորձա-
ռութիւններուն վրայ հիմնուելով իրենց
փափաքները արտայայտել:

Պրն. Ֆէլիքս Ֆոռէն յետոյ վեհա-
ժողովի կողմէ էմիլ Լուպէի հանրապե-
տութեան նախագահի պաշտօնին կոչ-
ուելուն առթիւ, ֆռանսական ժողո-
վուրդը, մանաւանդ վերջին տարիներու
յուզումներէն ա'լ ձանձրացած, լաւա-
գոյն առիթը կը համարէ հիմա, այն
տեսակ մէկը այդ պաշտօնին կոչուած
տեսնել, որ կամքի ոյժը և մտքի ճկու-
նութիւնը պիտի սնենայ հակազդեւ
ամէնուն դէմ, իրաւունքի և մարդկայ-
նութեան սկզբունքին համար, որով
միայն կարելի պիտի ըլլար մտքերու
հանդարտութիւնը նորէն փրանսայէն
ներս մտցնել:

Ժողովուրդին այս տեսակ պահան-
ջումներուն բաւականութիւն տալու յոյ-
սերը ներշնչող անձնաւորութիւն մը չէ
Ֆռանսայի հանրապետութեան նորընտիր
նախագահը, մանաւանդ որ Բանամայի
դայթակղութենէն մեծ բեռ մը կը ծան-
րանայ ուսերուն:

Անցեալ չաբաթ, նախագահական
ընտրութեան համար վերսալլի մէջ դու-
մարուած վեհաժողովն ալ իր հաշիւները
ունէր Պրն. էմիլ Լուպէին տալով իր
քուէները: Լուպէ այն անձերէն է, ո-
րոնք ամէն կերպով կրնան Ֆէլիքս Ֆոռի
սկսած անգոյն քաղաքականութիւնը
չարունակել հանդէպ կուսակցութիւն-
ներուն: Իր՝ Ծերակոյտին նախագահի

պաշտօնը արդէն ապացոյց մըն է թէ
ինքը հանդարտ մտքով և սրտով անձ-
նաւորութիւն մըն է, որ իրեն յանձ-
նուած պաշտօնական ձեւակերպութիւն-
ները կատարելու համար հարկ եղած
յատկութիւնները ունի:

Հեռագիրները և թղթաբերը ար-
դէն հեազհետէ կը բերեն մեզ այն
լուրերը թէ ֆռանսական ժողովուրդը
այնքան ալ համակիր չէ իր նորընտիր
նախագահին, և նոյն իսկ այնպիսիներ
կան որոնք կ'առարկեն թէ Տրէյֆիւսի
վերաքննութեան հակառակորդները,
որոնք մեծամասնութիւնը կը կազմէին
վեհաժողովին մէջ, մասնաւոր դիտումով
ընտրած են Լուպէն հանրապետութեան
նախագահ, որպէս զի իրենք անոր ա-
ռանց կամքի քաղաքականութենէն օգ-
տուելով շարունակեն իրենց պայքարը
Տրէյֆիւսեաններուն դէմ, յուսալով որ
անոնք վերջապէս տեղի պիտի տան:

էմիլ Լուպէի նախագահութեան
պաշտօնին կոչուելովը կարելի չէ ապա-
հով ըլլալ որ Ֆռանսա անցուց իր նա-
խագահի ընտրութեան խնդիրը: Օրէ օր
ծաւալ կ'առնեն Ֆռանսայի մէջ, հակա-
կրական այն ցոյցերը, որոնք ընտրու-
թեան առաջին վայրկեանէն պոռթկա-
ցած էին: Օրուան խնդիրը, այսօր,
Ֆռանսայի համար, միշտ նախագահի
ընտրութեան խնդիրն է, որ ներկայ
պայմաններուն մէջ կարելի չէ կանխա-
տեսել թէ ինչ բարդութիւններ պիտի
ստանայ:

Նախագահական նոր ընտրելիներու
անուններ արդէն բերնէ բերան սկսած
են շրջիլ, եւ ժողովրդի մէջէն պահանջ-
ներ կը լսուին թէ Լուպէ պէտք է հրա-
ժարականը տայ:

Պիտի՞ ունենայ Պրն. Լուպէ նկա-
րագրի տոկունութիւնը՞ հրաժարելու
համար իրեն եղած պատիւէն, եւ կամ
նոր կորովով մը յայանեւուլու համար,
իբր ժողովրդական նախագահ մը:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Տ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Թ Ի Ի 5 . Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Պատրիարքարանը եւ ազգային բերքերը
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԻՏԷՊԼՆԵՐ
Ուսուցման բարձրումներ
ԺԻԻԼ ԼԸՄԷԴՐ

Խոհեր ՍԿԵՊՏԻԿ

Դերասանուհին (վեպ)
ԼԵԻՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

Խզուած լարեր ու բրբռումն բելեր
ԿԱՐՕ

ԴԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ
Պէլ կեանքն ու մտաւորականութիւնը
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Գրական շարժում

ԴԱԴԱՌՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Ուխտի տղան
ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ

Առողջապահական օրերներ ջղայնու-
թեան զերծ մնալու համար
ՏՈՔԹ. ԴԱԻԹԵԱՆ

Հիւանդանոցին ի նշատ նուագահանդի-
սին առթիւ ՆԱՐԿԻՍ

Տնտեսական կեանք եւ միջազգային քաղա-
քականութիւն Մ . Շ .

**Թերթիս կողքին վերջի երկու երեսները ազդարարու-
թիւններու յատկացուած են : Գիւններու համար դիմել Տնո-
րէնին, Սրամպու, Պապը Այի ձառտեսի թիւ 20 :**

Կ. Ս. Իւթիւճեանի թարգմանած գրքերէն հետեւեալները մնացած են և ասոնք ալ սպառելու վրայ:

Թափառական Հրեայ	4	Հատոր գին	50	դր.
Ընտանեգումը	2	"	12	"
Կարմիր մարդոց երգումը	2	"	10	"
Ամուսնութիւնք Փարիզի	1	"	5	"
Սկզբունք Բաղ. Տնտես.	1	"	3	"
Պատ. Օրինագիրք	1	"	2	"

Կը գտնուին Պոլսոյ հայ գրնավաճառաց քով:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՅՐԻԷԼԵԱՆ

Բերա, Մեծ Փողոց քիւ 200, Կալարա Սերային դիմաց

Կը կատարէ աղուայի վերաբուժական և արհեստական ամեն տեսակ գործողութիւն: Աղուայի քաշելը թմրեցուցիչ Դեղերով: Աղքատները ձրի կը դարմանուին:

5-5

ՀԱՐԲՈՒԹ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ



Վերջին քանի մը շաբաթուան միջոցին հարբուխի համաճարակ մը կայ Պոլսոյ մէջ. ամէն ընտանիքի մէջ գրեթէ հարբուխ ունեցող մը կը գտնուի: Ուստի կը յանձնարարենք որ խնամք տարուի ամէն ընտանիքի մէջ Կ. ԵԱՎՐՈՒԷԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունէն տուփ մը թէյ ունենալ, որպէս զի ատով միջոցը ունենան հարբուխի համաճարակին դէմ մաքառելու: Յիշեալ վաճառատունէն եղած թէյի բաժակ մը, քիչ մը ոռմով երբ տաք տաք խմուի, կուրծքը կը կակուղցնէ և ցուրտի դէմ հակազդող միջոց մըն է:

Ուշադրութիւն վաճառատան մարքային:

Վաճառատուներ կը գտնուի Ճեյալ պէյ խանին տակ, քիւ 10